

Էջմիածին



ՌՆԷ
ԺԵ ՏԱՐԻ


Յ ռնիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Զ

1958



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման փառասնամյակը	3
Թեհրանի հայոց թեմական խորհրդի նախագահ Վեհափառ Հայրապետին և Նորին Սուրբ Օծուրյան պատասխան հեռագիրը	7
Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահ Թեհրանի հայոց թեմական խորհրդին և թեմական Պատգամավորական ժողովին	9
Պաշտոնական հաղորդագրություններին քեմերի հավատացյալ ժողովրդի բողոքը Անթիլիասի ռոմեոսյունների դեմ	17
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆ.— Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Տ. Վագգեն Ա Կարողիկոսի ուղեորությունը Մոսկվա՝ Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման փառասնամյակի հանդիսություններին մասնակցելու համար	22
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ողջույնի խոսքը Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման փառասնամյակի առթիվ	31
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆ.— Ռումինիայի Ս. Հուստինիան և Բուզդարիայի Ս. Կիրիլ Պատրիարքները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	33
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում Հոգեգալստյան տոնի օրը	43
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ	48
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ.— Լուսավորչի տեսիլք	50
Գ. Պ.— Սուրբ Էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետ	51
ԿԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Սուրբ Խաչ Դպրեվանքի սաներուն՝ ընդհանրապես և իրենականներուն՝ մասնավորապես	52
ԱՐԻՍ ԱՐԵՂԱ ՇԻՐԱԿԱՆՅԱՆ.— Երուսաղեմի Սուրբ Հարություն տաճարին՝ քրիստոնեության մեծ սրբավայրին նորոգությունը կսկսի օրերս	53
Գ. ՀԱԿՈՐՅԱՆ.— Ներսես Շնորհալու Հոգեգալստյան, Վաղարշապատի և Վերափոխման շարականները	58
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելությունը 1958—1959 ուսումնական տարեշրջանի համար	63


ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՉԵՄԿԵԿԱՆ ՍՍՈՒ ԷՅՄԻԱԾԻՆ

«ԷՅՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaktion of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Կրկան, 1958 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱԹ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐՄԱՋՆԱԳՈՋՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱԶՆ ՀԱՅՈՑ



ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԹՈՒԹՅՈՒՆ ԱԼԵԿՍԻ





ՌՈՒՄԵՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ ՆՈՐԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆ






ՔՈՒՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻՂ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԸ



Մայիսի 10—18 օրերին, Մոսկվայում, հանդիսավոր իրադրության մեջ տոնվեց Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակը:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի հրավերով, Ռուսաց եկեղեցու այդ պատմական հոբելյանական հանդիսություններին հրավիրվել էին Պրավոսլավ բոլոր եկեղեցիների պատրիարքներն ու բարձրաստիճան ներկայացուցիչները:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու ուրախ առիթով Մոսկվա կին ժամանել Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ Փիատիրի միտրոպոլիտ Արևնագորացի, Ալեքսանդրիայի Պատրիարք Բրիտանիոսը, Անտիոքի Պատրիարք Ալեքսանդր Գ-ը, Վրաստանի Պատրիարք-Կարողիկոս Մելիքսեդեկ Գ-ը, Ռումինիայի Պատրիարք Հուստինիանը, Բուլղարիայի Պատրիարք Կիրիլը, Սերբիայի Պատրիարքի ներկայացուցիչ Բոան Եպիսկոպոսը, Արքեմքի միտրոպոլիտ Յակովը, Ալբանական, Լեհական, Չեխական, Ֆինլանդական և այլ Պրավոսլավ եկեղեցիների ներկայացուցիչները:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին, ի նշան այն խոր

հարգանքի, որ Ռուսաց եկեղեցին տածում է ղեպի Մայր Արող Ա. Էջմիածինն ու Նրա արժանավոր Դահակայ Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կարողիկոսը, Իր փետրվար 24 թվակիր նամակով պաշտոնապես հրավիրել էր նաև Վեհափառ Հայրապետին, որպես ճյուղ ներկա լինելու Ռուսաց եկեղեցու Պատրիարքության վերահաստատման հոբելյանական այդ հանդիսություններին:

Վեհափառ Հայրապետը, սիրով և շնորհակալությամբ շնորհակցելով Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի սրտագին հրավերը, որոշեց անձամբ ներկա լինել Ռուս Պրավոսլավ եկեղեցու ազգային մեծ հանդիսությանը, փոխադարձ հարգանք մատուցելու Ռուսաց Պրավոսլավ եկեղեցուն և Նրա արժանավոր Պետին, և է՛լ ավելի սերտացնելու և ամրապնդելու Հայ և Ռուս եկեղեցիների, հայ և ռուս ժողովուրդների սրտառույշ բարեկամությունը:

Վեհափառ Հայրապետը Մայիսի 9-ին Երևանի օդանավակայանից Իր շֆախմբի հետ մեկնեց Մոսկվա:

Մոսկվայում խանդավառ մթնոլորտի մեջ և մեծ հանդիսությամբ տոնվեց Ռուսաց Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակը:

Ուղիղ 40 տարի առաջ, 1917 թվականին, երկար ընդհատումից հետո, Մոսկվայի և

Համայն Ռուսիո հանգուցյալ Տիխոն Պատրիարքի օրով, վերահաստատվում է Ռուսաց Պապոսյալ սկեզեցու Պատրիարխությունը:

Ինչպես հայտնի է, Բրիտաննությունը Ռուսաստան մտավ է գործել ժ դարում, Կիևի մեծ իշխան Վլադիմիրի օրով, հարավից, Կոստանդնուպոլսի Բյուզանդական եկեղեցու ֆարոգիչների փրոցով: Հերանձությունը հարավային Ռուսաստանում համարյա առանց պայքարի տեղի է տալիս Բրիտաննության առաջ և Ռուսական հողի վրա հիմնվում է առաջին Բրիտաննական եկեղեցին: Ռուսական երիտասարդ և նորաստեղծ եկեղեցին, երկար ժամանակ, մանավանդ իր սկզբնավորության և կազմակերպության օրերին, կախման մեջ է գտնվում Կոստանդնուպոլսի Օրթոդոքս Մայր եկեղեցուց որպես «դուստր եկեղեցի»: Հետագայում, սակայն, «մայր» և «դուստր» եկեղեցիների փոխհարաբերությունը վերջնականապես հանգում է Ռուսաց նորահիմն եկեղեցու լիակատար հեքարկմանը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքին: Ռուսաց եկեղեցու ղեկավարությունը անցնում է Տիեզերական Պատրիարքի ձեռք, որը անսահմանափակ իշխանություն է ձեռք բերում Ռուսական եկեղեցու վրա: Նա էր նշանակում Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտներին, ձեռնադրում եպիսկոպոսներին: Որպես կանոն, Պատրիարքը Ռուսաստան է ուղարկում հույն միտրոպոլիտներին, առանց հաշվի առնելու Ռուս հոգևորականության, ազնվականության և ժողովրդի ցանկությունը: Այս գրությունը շարունակվում է 500 տարի: Այս ժամանակաշրջանում Ռուս Պապոսյալ սկեզեցին անում, ամրապնդվում է և կազմակերպվում, ունենում իր ինքնուրույն եկեղեցական կանոնադրությունն ու ժամակարգությունը:

Այդ ժամանակաշրջանում Ռուսական եկեղեցու շուրջը կազմակերպվում է հավատավոր, կրթված և լուսամիտ հոգևորականություն, որը կարողանում է լիապես սպասարկել իր ժողովրդի հոգևոր կարիքներին և իր ձեռնում է կենտրոնացնում Ռուսաց եկեղեցու ղեկավարության գործը:

ԺԻ և ԺԵ դարերում, Բյուզանդական եկեղեցուց անջատվելու խնդիրը սուր կերպով է դրվում: Ժամանակաշրջանի Ռուս պետական, քաղաքական ու եկեղեցական գործիչները

պահանջում են, որ Ռուսաստանը ունենա իր ազգային, անկախ ու ինքնուրույն միտրոպոլիտությունը, իր անկախ հոգևոր իշխանությունը: Այս եկատառումներով, ԺԵ դարում Մոսկվայի իշխանների քաղաքական հեռատեսությամբ և Ռուս միտրոպոլիտների հայրենակներ գործակցությամբ, Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտի աթոռավայր դարձավ Մոսկվան: Ռուսաց եկեղեցու անկախության հարցը ժամանակի հրամայական պահանջ էր դարձել Ռուս եկեղեցու ներքին անի, կազմակերպվածության և բյուզանդական կայսրության անկայուն դիրքի հետևանքով: ԺԵ դարի 50-ական թվականներին Բյուզանդիոնը, շրջապատված արշավող օսմանցիներից, ապրում էր ծանր և մղձավանջային օրեր: Կայսրը և Պատրիարքը իրենց հայացքները ուղղել էին դեպի Հոմ: Վտանգի տակ էր օրթոդոքսությունը: 1441—1443 թվականներին, Մոսկվայի մեծ իշխան Վասիլի Վասիլևիչը երկու նամակով դիմում է բյուզանդական կայսրին և Պատրիարքին և խնդրում, որ երկուստեք խաղաղ համաձայնությամբ հանաչվի Ռուսաց եկեղեցու անկախությունը: Կայսրն ու Պատրիարքը մերժում են:

1448 թվականի դեկտեմբերի 15-ին Մոսկվայի մեծ իշխանը հրավիրում է Ռուս հոգևորականության սրբազումար ժողով: Նույն թվականին, Մոսկվայան Ռուսիայի իշխանության քաղաքական իմաստությամբ և ուղղափառության նախանձախնդիր Ռուս բարձրաստիճան հոգևորականության որոշումով, Ռուսաց Պապոսյալ սկեզեցին իրեն հայտարարում է ինքնուրույն և անկախ՝ Կոստանդնուպոլսի Հունաց Պատրիարքից և բյուզանդական կայսրների ազդեցությունից: Ռուս եպիսկոպոսների սրբազումար ժողովը միաձայն Ռուսիայի միտրոպոլիտական Սրբազան Դեմի վրա է քաղաքացնում Կիևի և Համայն Ռուսիո միտրոպոլիտ, «հայրենի երկրի մեծ վշտակիր, երանելիագույն Իոնիկ»՝ Ռյազանի եպիսկոպոսին: Նույն ժողովի որոշումով և Ռուս հոգևորականության միաձայն հավանությանամբ, Ռուս Պապոսյալ սկեզեցին, որ մինչ այդ էլ «ժողովրդական էր՝ ըստ հոգվա և ազգային՝ ըստ գործառնություն», այնուհետև դարձավ հաստատապես և անդառնալիորեն ինքնանկախ (ավտոկեֆալ)՝ կանոնապես և անկախ՝ նվիրապետությամբ:

Պատմական այդ մեծ դեպքից հետո, Ռուս Պրավոսլավ եկեղեցին շնորհիվ և առավել վստահությամբ ձեռնամուխ է լինում ռուս ժողովրդի հոգևոր լուսավորության և բարոյական դաստիարակության, ռուս երկրի զարգացման և ամրապնդման, ռուս պետության անվտանգության ու հզորության փառապանծ գործին:

Ռուս Պրավոսլավ եկեղեցին իր հազարամյա գոյության ընթացքում շնորհակալ դեր է կատարել ռուս ժողովրդի կրոնաբարոյական, հասարակական-կրթական ու քաղաքական կյանքում: Ռուս վեհաժողով, ազնիվ, աշխատասեր ու մեծահոգի ժողովրդի շատ սերունդներ, իրենց կրոնաբարոյական դաստիարակությունը, հայրենասիրության վառ զգացմունքը, բրնձանեղեղ և անհաղթելի մարտասիրության վեհ գաղափարները ստացել են հարազատ, Մայրենի եկեղեցու ձոցում:

Հետագայում ռուս միտոսլոգիստներին փոխարինում են Ռուս եկեղեցու պատրիարքներ, սկսած առաջին Պատրիարք Հորից (1591—1607 թ. թ.):

1590-ական թվականներին Մոսկվայում գումարված հույն և ռուս եպիսկոպոսների համագումարը, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի նախագահության տակ, կանոնականացրեց Ռուսաց Պատրիարքական Աթոռի օրինականությունը: Ինքնագլուխ Օրորոգոս եկեղեցիների եպիսկոպոսական շարքում հինգերորդ Աթոռ համարվեց Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքությունը:

1590—1721 թվականներին Մոսկվայի Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքական Աթոռի վրա բազմել են 10 պատրիարքներ: 1700 թվականի հոկտեմբերի 10-ին վախճանվեց Ադրիանոս Պատրիարքը, որի մահից հետո վերացվեց Պատրիարքությունը և նրա տեղ հաստատվեց Ս. Սիմոնի կոլեգիալ (հավաքական) ղեկավարությունը: Պետության գլուխ կանգնած Պետրոս Ա ցարը, որպես օծյալ, նույնպե՛ս նաև Ռուս եկեղեցու պետ, գլուխ, ինքնիշխան, տեր ու տնօրեն:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու սինոդական ղեկավարության այս շրջանը տևեց մինչև 1917 թվականը:

1917 թվականին, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Տիխոնի օրով, Ռուս եկե-

ղեցին, ազատագրվելով ցարական ինքնակալության կապանքներից, վերահաստատեց իր Պատրիարքությունը: 40 տարուց ի վեր, ՍՍՌՄ Կոնստիտուցիայի սկզբունքների համաձայն, Ռուս Պրավոսլավ եկեղեցին բաժանվել է պետությունից և ապրում է ու ստեղծագործում իր սեփական օրենքներով, անկախ և ինքնուրույն կերպով:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատումը առաքելության, անկեղծության և քաղաքական և հոգևոր բացեց Ռուս եկեղեցու առաջ:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու արժանավոր Դահակալ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի, ընտրված 1945 թվականի փետրվարի 4-ին, ձեռնհասառեն ղեկավարում է եկեղեցուն, աստվածային օգնությամբ և իր ժողովրդի սիրով:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի տոներ հանդիսացավ վառ արտահայտությունը Պրավոսլավ եկեղեցու միասնականության, կենսունակության և բրնձանեղեղ համագործակցության:

Այսօր, բրնձանեղեղ աշխարհում Ռուս Պրավոսլավ եկեղեցին շնորհակալ և աստվածահաճ գործ է կատարում ժողովրդի կրոնական դաստիարակության գործում, որպես բրնձանեղեղ մշակույթի ջանակիր, խաղաղության պաշտպան, իր բազմամիլիոն հավատացյալներով, Լեկզյական եպիսկոպոսությամբ, կազմակերպվածությամբ, կրոնական մամուլով, հոգևոր ախպրամիակներով:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, նրա դարավոր ու պատմական կենտրոն աստվածակառույց Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը, Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի ուրախ առիթով, սրտագին մաղթում են նրան հաջողություն, անսասանություն, պայծառություն՝ իր առաքելության մեջ, ի փառս Բրնձանեղեղ եկեղեցու և ի մխրբարություն հավատացյալ բրնձանեղեղ ժողովուրդների:

Վեհափառ Հայրապետ Մոսկվայում Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակին նվիրված հանդիսություններին, արտահայտելով Ամենայն

Հայոց Հայրապետության և Մայր Արոտ Ս. Էմիլիանի անկեղծ հարգանքն ու սերը հանդիպում է ժողովրդի փառապանք Մայրենի եկեղեցու, Իր ողջության խոսքի մեջ ասում էր.

«Բրիստոսի փառքի համար ապրող ու գործող մի մեծ և գորավոր զինվորություն է Ռուս Պրավոսլավ Ս. եկեղեցին, որ դարեւ, դարեւ շարունակ հանդիսացած է ճշմարիտ հավատի բերդ, և ոգեկան լույսի աղբյուր և հոգեւոր խաղաղության նավահանգիստ, ծովից ծով և օվկիանոսից օվկիանոս տարածվող Ռուսական աշխարհի մեջ: Եվ այսօր էլ նույն հավատի բերդն է, նույն լույսի աղբյուրը, նույն խաղաղության նավահանգիստը հավատացյալ հոգիների համար, իմաստուն և հեղինակավոր հովվապետությամբ ներքև նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի:

... Ավելի քան երկու հարյուր տարիների Բրիստոնեական եղբայրական սիրո և փոխադարձ հարգանքի ու գործակցության արմատացած կապեր կան մեր երկու եկեղեցիների և մեր երկու ժողովուրդների միջև: Այդ կապերը անփակտելի են դարձել մեր հավատացյալ ժողովուրդների աղօթքներով և այրյունով զրված պատմությամբ: Այդ կապերը ամուր և անփակտելի կմնան հավիտյան: Եվ ինչպես անցյալի մեջ, նաև այսօր և միշտ,

Հայ եկեղեցին կլինի Ձեր կողմին, բոլոր եկեղեցիների կողմին՝ համապնդումն Քրիստոսի եկեղեցու, համապնդումն սիրո և եղբայրության ոգու մարդկանց միջև, համապնդումն աշխարհի խաղաղության:

Ռուս ժողովուրդը, Ռուս մեծ եկեղեցին միշտ Բրիստոնեական եղբայրական սեր, սրտառուչ և ազնիվ համակրանք է տաճել դեպի հայ ժողովուրդը և նրա Մայրենի եկեղեցին, դեպի մեր եկեղեցական նվիրապետությունը, ինֆանտությունը: Մանավանդ վերջին տարիներին, երջանկանիշատակ Գևորգ Ա Կարողիկոսի օրերից սկսած, փոխադարձ սիրո և Բրիստոնեական համագործակցության ոգին միշտ վառ է եղել երկու եկեղեցիների և հավատացյալների միջև: Փոխադարձ սրբազան վստահության, հարգանքի և սիրո վրա է խարսխված Ռուս և Հայ եկեղեցիների Բրիստոնեական հոգևոր հաղորդակցությունը, երկու Ուղղափառ եկեղեցիների ավետարանական եղբայրությունը, որը օրերի հետ աճում է և ամրապնդվում, վերածվելով սրտառուչ մտերմության և համագործակցության:

Թող է՛լ ավելի անի և ամրապնդվի Հայ և Ռուս եկեղեցիների եղբայրական համագործակցությունը:





**ԹԵՂՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ
ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԻՏԻՆ
ԵՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ**

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.,
ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. ԷՋՄԻԱՍԻՆ

Վեհափառ Տե՛ր.

Այսու որդիական պարտք էմ համարում Ձերդ Վեհափառությանը խոնարհաբար նաղորդելու, որ Թեհրանի բեմի Պատգամավորական ժողովը, սույն րվականի փետրվարի 26-ին զումարած իր ներքական նիստում՝ ֆենուրյան առնելով Ս. էջմիածնի Մայր Աթոռի և Թեհրանի բեմի փոխնաարարետությունների խնդիրը, հանդեց այն եզրակացության, որ Իրանի փոքրամասնությանը կրոնական պետերի և պապիրակների նկատմամբ, Իրանի նախարարաց խորհրդի 1949 րվականի հուլիսի 25-ի, Ձերդ Վեհափառությանը ծանոթ, որոշումից ի վեր, Թեհրանի բեմի և Ս. էջմիածնի Մայր Աթոռի հարարերություններն ունեցել են միայն ձեական և անվանական բնույթ: Մյաժամանակ, նկատի ունենալով Թեհրանի բեմի համար ստեղծված խիստ բացառիկ պայմանները և մեր եկեղեցու անվտանգությանը կապված որոշ մտահոգություններ, ինչպես և մի շարք այլ հիմունքներ, Պատգամավորական ժողովն իր վերոհիշյալ նիստում միաձայնությամբ որոշեց՝ զաղարեցնել Ս. էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած ձեական կապն ևս և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ Թեհրանի բեմն առնելու իր հովանու ներքո:

Մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն, մնամք խորին հարգանքով:

Թեհրանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ՝
դոկտ. Ա. ԲԱԲԱՆՅԱՆ

ԹԵՂՐԱՆ,
20 մարտի 1958 ր.
№ 185/25



ԹԵԶՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Թ Ե Զ Ր Ա Ն

Ապրիլի 22-ին ստացանք Ձեր 29 մարտի նամակը:

Մայր Արարը չի կարող համաձայն լինել Ձեր որոշման: Ոչ ոք իրավասություն չունի հայ եկեղեցիների և հավատացյալների հոգևոր կապը կտրել Ս. Էջմիածնից: Մենք պիտի գրենք Ձեզ. Մեր խոսքը ուղղելով Թեմական ժողովի և իրանահայ ժողովրդին:

Ի հարկին Մենք պիտի դիմենք նաև Իրանի բարեխնամ կառավարության:

Մինչ այդ. մնացե՛ք խաղաղ և լավստես և մի՛ կատարե՛ք որևէ ձեռնարկ՝ պիտի ու այլ եկեղեցական կենտրոնի:

Մենք վստահ ենք, թե ամեն դժվարություն կհաղթահարվի և Ս. Էջմիածինը, իբրև հոգևոր կենտրոն, իր դարավոր հովանին կպահպանե Իրանի դրացի և դարեկամ պետության մեջ գործող հայ եկեղեցիների վրա, հարգելով իրանական պետական օրենքներն ու շահերը:

Իրանի հայ թեմերը, ինչպես տեղյակում դարեւ շարունակ, կան ու կմնան նաև այսուհետև Մայր Արար Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքին:

Կհաջորդե նամակը:

Լսեցե՛ք Էջմիածնի սուրբ ծայրը և ընդունեցե՛ք Աստուծո և Մեր հայրապետական օրհնությունը:

Վ.Ա.Զ.Գ.ԵՆ. Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 ապրիլի 1958 թ.

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ





**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԴԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԿԸ
ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ
ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

**ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ
ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

Թ Ե Հ Ր Ա Ն

Սույն թվականի ապրիլ 22-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը սաացել և ընթերցել է Ձեր 29 մարտ 1958 թվակիր համար 165/25 նամակը, որով Երեւանի պարտք եք համարում «խոնարհաբար հաղորդելու, որ Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովը, 1958 փետրվարի 26-ին գումարած իր հերթական նիստում, ի նկատի ունենալով Իրանի նախարարաց խորհրդի 1949 թվականի հուլիսի 25-ի որոշումը Իրանի փոքրամասնությանը կրոնական պետերի և պատվիրակների նկատմամբ», ինչպես նաև նկատի ունենալով «Թեհրանի թեմի համար ստեղծված խիստ քաղաքակ պայմանները և մեր ծննդեցու անվտանգությանը կապված որոշ մտահոգություններ, ինչպես և մի շարք ազգային հիմունքներ, որոշել է դադարեցնել Ս. էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած ձևական կապը և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ Թեհրանի թեմը առանձին իր հովանու ներքո»:

Նորին Ս. Օծուխունը ապրիլի 24-ին Ձեզ հղել է հետևյալ հեռագիրը.

«Ապրիլի 22-ին ստացանք Ձեր 29 մարտի նամակը:

Մայր Աթոռը չի կարող համաձայն լինել Ձեր որոշման: Ոչ ոք իրավասություն չունի նայ Եկեղեցիների և հավատացյալների հոգևոր կապը կտրել Ս. էջմիածնից: Մենք պիտի գրենք Ձեզ, Մեր խոսքը ուղղելով Թեմական ժողովի և իրաճանաչ ժողովրդին:

Ի հարկին մենք պիտի դիմենք ճան Խրանի բարեխնամ կառավարության:

Մինչ այդ, մնացել է խաղաղ և լավատես և մի՛ կատարել՝ որե՛ն ձեռնառի՝ դիմելու այլ եկեղեցական կենտրոնի:

ՄԼՆԲ վստահ եմք, քե ամեն դժվարություն կհաղթահարվի և Ս. Էջմիածին-
ընդ, իբրև հոգևոր կենտրոն, իր դարավոր հովանին կպահպանե Իրանի դրացի և
բարեկամ պետության մեջ գործող հայ եկեղեցիների վրա. հարգելով իրանա-
կան պետական օրենքներն ու շահերը:

Իրանի հայ քեմերը, ինչպես անցյալում դարձել շարունակ, կան ու կմնան
նաև այսուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև:

Կճաչարդե նամակը:

Լսեցե՛ք Էջմիածնի սուրբ ծայնը և քնդունեցե՛ք Աստուծո և Մեր հայրա-
պետական օրհնությունը:

Ին վերոհիշյալ Ձեր գրությունը վեհափառ Հայրապետի օրտի և ապրում-
ների վրա ինչ ազդեցություն է գործել, այդ մասին մենք չենք գրում, որով-
հետև դուք չկարողանաք լսել: Ամենայն Հայոց Կաթողիկոսի վիշտը այս
ահավոր և պատմականորեն աննախընթաց ողբերգության առաջ:

Ներկա գրությամբ կամենում ենք պատասխանել Ձեր 29 մարտ 1958 թվա-
կի նամակին՝ համուռ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի,
Նորին Վեհափառություն Տ. Տ. Վաղգեն Ա Հայրապետի հավանությամբ, այն
հույսով, որ Դուք, ծանոթանալով նրա բովանդակությանը, պիտի փարատվեն
բոլոր թյուրիմացությունները, պիտի լսվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոր-
դորը և պիտի վերահաստատվեն դարավոր հոգևոր կապերը Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնի և Թեհրանի թեմի միջև:

1) Նախ մենք պետք է նկատենք, թե զժվար է հավատալ, որ իրանահայ
հավատացյալ ժողովուրդը, հոգևոր դասը և եկեղեցական-ազգային իշխանու-
թյունները կարողանալին նման որոշման հանգել, այսքան անսպասելի և ան-
բացատրելի կերպով:

Եվ իրոք, այդ երևում է նաև Ձեր նամակից, ուր խոսում եք Թեհրանի թե-
մի համար ստեղծված խիստ բացառիկ պայմանների և մեր Եկեղեցու անվտան-
գությունը կապված որոշ մտահոգությունները-ի մասին: Հետևաբար պետք է
եզրակացնել, թե ինչ որ նոր և արտաքին պատճառներ ստեղծվել են
խիստ բացառիկ և վտանգավոր պայմաններ Ձեր եկեղեցական կյանքում:
Մենք է մեզ իմանալ և հաստատել, թե որո՞նք են այդ խիստ բացառիկ ու
վտանգավոր պայմանները, որոնց մասին որոշակի կերպով Դուք ոչինչ չեք ա-
սում Ձեր նամակում:

2) Դուք հիշում եք միայն մի օրինական պարագա, այն է՝ 1949 թվականի
իրանական կառավարության որոշումը Իրանի փոքրամասնությանը կրոնական
պետերի նկատմամբ:

Այդ որոշումը ծանոթ է մեզ 18 հունիս 1956 թվակի Թեհրանի հայոց թե-
մական խորհրդի զեկուցագրից:

Ինչքան մենք հասկանում ենք, այդ որոշումից բնավ չի բխում որևէ ան-
հաշտ վիճակ կամ տրամադրություն Թեհրանի թեմի՝ Ս. Էջմիածնի հոգևոր հո-
վանավորության տակ լինելու նկատմամբ: Մնաց որ այն հոգևոր կենտրոնը,
որին կամենում եք կապել Ձեր թեմը, նույնպես օտար մի պետության հողամա-
սի վրա է գտնվում, և այն էլ ոչ իսկ դրացի: Ուստի Ձեր ակնարկած պետական
օրենքի կապակցությամբ իրավական կացությունը մնում է նույնը:

Ուրեմն Գերագույն Հոգևոր Խորհուրդը չի կարող ընդունել Ձեր այդ փա-
տարկումը իբրև հիմնավորված: Եվ չենք էլ կարող մտածել, թե Իրանական մեր
դրացի և բարեկամ պետությունը այլ կերպ կմեկնարարի իր 1949 թվականի
որոշումը փոքրամասնությանը կրոնապետների նկատմամբ:

3) Իրանի բարեխնամ կառավարության 1949 թվականի որոշումը Մայր
Աթոռի համար ոչ մի անընական որոշում չէ. արտասահմանյան մեր մի շարք
թեմեր նույնպիսի պետական օրենքների ներքև են գործում երկար տարիներից
ի վեր, ինչպես օրինակ Ռումիիայում: Նման օրենքներ բնավ երբեք արգելք
չեն հանդիսացել և չեն հանդիսանում, որ հիշյալ երկրների հայ եկեղեցիները
հոգևոր իմաստով ենթակա լինեն բազմադարյան Ս. Էջմիածնին, որ, ինչպես
ամբողջ աշխարհը դիմել, Գլուխն է Հայ Եկեղեցու և կենտրոնը հայոց սուրբ
հավատի Դ դարից ի վեր:

4) Մայր Աթոռը հարդել է և հարգում է Իրանի պետական օրենքները և 1949 թվականի որոշումը, և արդ իսկ պատճառով այդ թվականից ի վեր չի առաջարկել որևէ հոգևոր պետ իրանահայ թեմերի համար, միշտ հուսալով, որ հնարավոր կլինի իրանահայության ծոցից հաղմար թեկնածուներ գտնել, ժողովրդի հավանությունը:

Այս ազով առաջնորդվելով, Մայր Աթոռը ուրախությամբ հաստատեց, որ Թավրիզի թեմին հորև առաջնորդական տեղապահ ընտրվեց տեղի վաստակավոր քահանաներից արժանապատիվ Տ. Կարապետ ազագ քահանա Մանուկյանը: Եվ նույն ոգով առաջնորդվելով, անցյալ տարվա փետրվարի 27-ին Վեհափառ Հայրապետը առաջարկեց Թեմական խորհրդի, որ նաև Թեհրանի թեմը իբրև առաջնորդ ընտրի թեմից հոգևորականներից արժանապատիվ Տ. Հովհաննես ազագ քահանա Հաճյանին, որ կարող էր և վարդապետական վեդար ընդունել այդ պաշտոնին կոչվելու առթիվ: Ահա թե ինչ էր գրում Ձեզ նորին Ս. Օծուխյունը այդ նամակում:

«... Ահա թե ինչու Մեեք մասնում եմ լիազորել առաջնորդական տեղապահի պաշտոնով Ձեր հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Հովհաննես ազագ քահանա Հաճյանին, Թեմական խորհրդից հավանությամբ, այնպես ինչպես այդ կացությունը կա Թավրիզի բնում: Մնալով, որ մետ ապագայում հնարավոր լինի մի վերջնական կարգադրություն տեսնել, որպեսզի Թեհրանի բնմ ունենա իր վարդապետ կամ եպիսկոպոս առաջնորդը:

Թեհրանի Թեմական խորհրդի 1957 թվականի մարտ 25 թվակիր № 720/320 պատասխանի մեջ ասվում էր. «Ամենայն հանույթով ստացանք Ձեր Սրբության 27 փետրվար № 94 թվակիր օրհնարքը դրությամբ: Ձեզ կարող մեր երախտագիտությունը չհայտնել այն բարձր հոգածության համար, որ Ձեր Վեհափառությունը, իր բազմազարդ վիճակում, հնարավորություն է ունեցել ցույց տալ մեր թեմին:

Վեհափառ Տեր, շտապում ենք հայտնել Ձեր Սրբության, որ վերահիշյալ դրությունը իսկույն հղեցինք թեմիս Պատգամավորական ժողովին, որի իրավասությունների սահմաններում է գտնվում առաջնորդական փոխանորդի ընտրության հարցը, համաձայն հոգեւորական կաթողիկոս Գևորգ Զ-ի կողմից հաստատված թեմական կանոնադրության և խնդրել, որ ամենապարզ ծափահակալը ընտրում հանգամանորեն ընտրության առնվին ընտրելի և ընտրության պարագաները և արդյունքը, առաջին հերթին ներկայացնելով Ձեր Վեհափառության, Գործի ընթացքը հաղորդելով Ձեզ Վեհափառության և մի անգամ ևս շնորհակալություն հայտնելով Ձեր հայրական հոգածության և ուշադրության համար, որդիական խորին հարգանք մատուցում ենք ի համար Ս. Այուդ, ինդրելով Ձեր հայրական օրհնությունը (ստորագրողներ նախագահ Վահրամ Դավիթյանյան, անգամ քարտուղար Դավիթ Փափաղյան):

Նույն հարցի կապակցությամբ Վեհափառ Հայրապետը ստացավ Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովի կողմից 15 մայիս 1957 թվակիր պաշտոնագիրը, որտեղ ասվում էր.

«Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովը, սույն թվականի մայիսի 7-ին իր արտակարգ նիստում, զբաղվեց Ձեր Վեհափառության 27 փետրվար № 94 օրհնարքը դրությամբ, ուղղված Թեհրանի հայոց Թեմական խորհրդին: Պատգամավորական ժողովին իր խորին շնորհակալությունները ու երախտագիտական արտահայտությունները արձանագրեց Ձեր Վեհափառության հոգածության և ուշադրության համար:

Առաջնորդական տեղապահ ունենալու խնդիրը Պատգամավորական ժողովը մանրամասն ու հանգամանորեն ընտրության առնելուց հետո միաձայնությամբ կայացրեց հետևյալ որոշումը, որ շտապում ենք հայտնել Ձեր Վեհափառության: Նկատի ունենալով, որ թեմիս Պատգամավորական ժողովի, Թեմական խորհրդի և Պատգամական մյուս մարմինների պաշտոնավարության եռամյա շրջանը լրանալու վրա է և շատ մոտ ապագայում նոր ընտրություններ տեղի պիտի ունենան, առաջնորդական տեղապահի ընտրության խնդիրը թողնել նոր ընտրվելից Պատգամավորական ժողովին, պատշաճ տնօրինություն անելու համար: Որդիական խորին հարգանք համարում ենք Ձեր Վեհափառության

Ս. Աջլու Դիվան Թեւրանի թեմի Պատգամավորական ժողովի նախագահ՝ Պերճ Գրիգորյան, քարտուղար՝ ղովա. Վ. Նահապետյանը:

Ս. Էջմիածնի կողմից այս բոլոր առաջարկությունները եղան՝ հարգելու համար Իրանի կառավարության որոշումները և իրանահայ եկեղեցական կյանքը համաձայնեցնելու տեղական պետական օրենքներին:

5) Մեզ անհասկանալի է թվում Ձեր գանգատը, որով հայտնում եք, թե իրանական կառավարության 1949 թվականի որոշման պատճառով, «Թեհրանի թեմի և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հարաբերություններն ունեցել են միայն ձեռնարկ և անվանական բնույթ»:

Եթե ձեռնարկ և անվանական բնույթն ասենք գործածում եք կամենալով հասկանալ, որ Ս. Էջմիածնի և Թեհրանի թեմի միջև որևէ կապ գոյություն չի ունեցել և թե փաստորեն առդեն իսկ խզված են պաշտոնական փոխադարձ հոգևոր բարոյական հարաբերությունները, ապա այն դեպքում պետք է նշենք, թե այդ բնավ չի համապատասխանում իրականությանը:

Հիշենք մի քանի կարևոր փաստեր, որոնք ցույց են տալիս, թե իրականություն մեջ սերտ կապ և գործակցություն է գոյություն ունեցել վերջին տարիների ընթացքում և՛ Մայր Աթոռի և Ձեր թեմի միջև:

ա) Նորին Ս. Օծոթյուն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրությունից ի վեր, այսինքն վերջին երեք տարիների ընթացքում, տասնյակ հեռագրեր և պաշտոնական նամակներ են փոխանակվել Մայր Աթոռի և Թեհրանի Թեմական խորհրդի միջև, միշտ Թեմական խորհրդի նախագահ մեծարգո տիար Վահրամ Դավիթխանյանի և քարտուղար Արթուր Լևոնյանի կամ Դավիթ Փափազյանի ստորագրությամբ և պաշտոնական կնիքով, իսկ երբեմն էլ փոխնախագահ Արտաշես Բաբայանի և անգամ քարտուղարներից մեկի ստորագրությամբ:

Այս շրջանին ստացվել են նաև տեղեկագրեր, զեկուղագրեր Թեհրանի Թեմական խորհրդից, Թեհրանի եկեղեցական խորհրդից, Թեմական հոգևոր գործակալ արժանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանից, Ղազվիների եկեղեցական խորհրդից, բազմաթիվ նասակներ այլ քահանաներից, վիճակագրական տեղեկություններ, լուսանկարներ և այլն: Մայր Աթոռի հետ նույնպես հարաբերություններ ունեցել են նաև Թավրիզի և Սպահանի թեմերը:

Մայր Աթոռում ստացված վերջին տեղեկագրերն է եղել Թեհրանի թեմի հոգևոր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանի 28 ապրիլ 1957 թվակի թիվ 126 տեղեկագրերը՝ Թեհրանի ամբողջ թեմում գործող 22 հայկական եկեղեցիների և հայ հավատացյալ ժողովրդի մասին, որի ընդհանուր թիվն է կազմում 65 450 շունչ, ըստ ներկայացված մանրամասն ցուցակի:

բ) Ձեր թեմի հոգևոր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանը իր 1 հոկտեմբեր 1957 թվակի թիվ 125 պաշտոնագրով խնդրել էր Սրբալույս Մեռոն ուղարկել Թեհրանի և մյուս թեմերի համար: Ընդառաջելով դիմումին, Մայր Աթոռից Սրբալույս Մեռոն ուղարկվեց և հանձնվեց Թեհրանի հոգևոր գործակալին գերաշնորհ Տ. Բարդեն եպիսկոպոսի ձեռամբ, որ Թեհրանի Թեմական խորհրդի նախագահի ցանկությամբ, դեպի Կալիֆոռնիա իր վերադարձին Թեհրանից անցավ, հանձնելու համար Սրբալույս Մեռոնը և բերելու Ձեր թեմին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունը:

դ) Թեմական Պատգամավորական ժողովի դիմանի կողմից Մայր Աթոռ է ուղարկվել 1954 թվականի օգոստոսի 10 թվակի թիվ 4 պաշտոնագրեր, որով պեկուցվում էր Գերագույն Հոգևոր խորհրդին՝ Թեմական Պատգամավորական ժողովի գումարման և հուլիսի 3—9 իր ունեցած չորս նիստերի և օրակարգի հարցերի մասին, ինչպես և երեք տարվա համար Նոր ընտրված թեմական խորհրդի մասին՝ բաղկացած 11 անդամներից:

Այս պաշտոնագրերը ստորագրել են Թեհրանի թեմի երրորդ Պատգամավորական ժողովի նախագահ պր. Պետո Գրիգորյանը, փոխ-նախագահ պր. Աշոտ Բարամյանը և քարտուղար ղովա. Վ. Նահապետյանը:

Նորընտիր Թեմական խորհրդի նկատմամբ Մայր Աթոռ ոչ մի առարկություն չի ունեցել և օրինավոր նկատելով այն, արժանացել է սիրով, փոխադարձ սիրալիր հարաբերություններ պահպանելով մինչև օրս:

դ) Կանոնավոր կերպով Մայր Աթոսից Թեհրան են ուղարկվել Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսապարբերակը և օրացույցներ, որոնց հաշիվները և վճարումները ստացվել են պարբերաբար, Իրան «Էջմիածին» ամսագրի պատասխանատու ներկայացուցիչ՝ նշանակվել է Շ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանը և այդ պաշտոնի մեջ վերահաստատվել Թեհրանի Թեմական խորհրդի 18 մարտ 1957 թվակիր մեղ ուղղված պաշտոնագրով:

ե) Ամուսնական հարցերի կտպակցությամբ պաշտոնական թղթակցություն է տեղի ունեցել Մայր Աթոսի և Թեհրանի թեմի միջև, ինչպես օրինակ 1955 թվականի դեկտեմբերի 19-ին՝ տիկին Մարգարիտ Վարդանի աղահարզանի կապակցությամբ, 1958 թվականի փետրվարի 6-ին՝ Լուսիկ և Մկրտիչ Սարհալյանի հարցով և այլն:

զ) Շնորհաբաշխումներ և պարգևատրումներ է կատարել Մայր Աթոսը, իրան հետևանք Թեհրանի Թեմական խորհրդի միջնորդությանց, վերջինը լինելով Թեհրանի Թեմական խորհրդի միջնորդությունը՝ 29 օգոստոս 1957 թվակիր № 196/361 պաշտոնագրով՝ ազգային բարերար սամաստեցի Տ. Մարգար Սարգսյանին Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու մասին, միջնորդություններ, որոնք սիրով հարգվել են Վեհափառ Հայրապետի կողմից:

է) Մայր Աթոսի և Թեհրանի Թեմական խորհրդի հարաբերությունները առնչված են եղել նաև Ս. Էջմիածնի Հոգևոր Զեմարանի հետ: Հիշենք Թեհրանի Թեմական խորհրդի 22 օգոստոս 1957 թվակիր № 793/359 պաշտոնագիրը, որով Ս. Էջմիածնի Հոգևոր Զեմարանի սան Պերկայացվում էր Թեհրանյան Կալ պատանի Արամ Մնացականյանը:

Հիշենք նաև Թեհրանի Թեմական խորհրդի նախագահ տիար Վահրամ Դավթիսյանի և Թեհրանյան Կալ պապայինների սնցյալ ատրի ուղարկած նվերները Հոգևոր Զեմարանի մեր սանների համար:

ը) Մայր Աթոսը, 1957 թվականի հունիսի 2-ին, Թեհրանի Թեմական խորհրդին ուղարկել է օրհնված խաչիկներ, հավատացյալներին բաժանելու համար, ստանալով Թեմական խորհրդի № 737/336 պաշտոնագիրը՝ ստորագրությամբ նախագահ տիար Վ. Դավթիսյանի և քարտուղար պր. Աբրահամ Ասատրյանի, որի մեջ դրված է. «Թեմական խորհուրդս իր հարգալի շնորհագրությունն է հայտնում Ձերդ Վեհափառության, հայրական բարձր ուղադրության համար: Հիշյալ խաչերը բաժանեցինք հավատացյալներին, որը հոգեկան սփոփանք և մեծ բավականություն պատճառեց նրանց»:

թ) 1957 թվականի օգոստոսի 25-ին Թեհրանի Թեմական խորհուրդը խոնարհաբար խնդրում էր Վեհափառ Հայրապետից՝ միջնորդել կյուպյենկյան հիմնարկության ներկայացուցիչների մոտ և հորդորել նրանց, որ Ս. Էջմիածնից վերադառնալիս անցնեն Իրանից, իրանահայ մշակութային կարիքների կապակցությամբ: Ընդառաջելով եղած դիմումին, մեր սիրելի Վեհափառ Հայրապետը ընդունությամբ է խոսել հարգելի ներկայացուցիչներին, խնդրելով, որ ընթացք տան իրանահայության հրավերին, և այդ մասին անմիջապես հետադրել է Թեհրանի Թեմական խորհրդին, 1957 թվականի օգոստոսի 26-ին:

Ահա տվյալներ և փաստեր, որոնք խոսում են հստակ և ստույգ կերպով այն մասին, թե նաև 1949 թվականի Ձեր հիշատակած կառավարական որոշումից հետո մինչև մեր օրերը, Մայր Աթոսի և Թեհրանի թեմի միջև հարաբերությունները և կապերը եղել են սերտ, հարատև և արդյունավետ՝ փոխադարձ սիրո և հարգանքի ու հոգևոր մխիթարության պայմաններում:

6) Ձեր գրության մեջ ավելացնում եք նաև՝ «ինչպես մի շարք այլ հիմունքներ» բացատրությունը, առանց որոշակի կերպով ասելու, թե որոնք են այդ այլ հիմունքները, որ պատճառ են հանդիսանում Ձեր որոշման:

«Այլ» թերթի մարտի 6-ի համարում, սակայն, կարդացինք մի հաղորդագրություն Ձեր թեմի սեպտեմբերի 26-ի Թեմական Պատգամավորական Ժողովի հինգերորդ նիստի և Ս. Էջմիածնից Ձեր թեմը բաժանելու որոշման մասին, որ լույս է սփռում Ձեր այդ հիշած «մի շարք այլ հիմունքներ» անորոշ խոսքերի վրա:

Այդ հաղորդագրության մեջ հիշված են ութ կկտեր, իրեն Վերականգնող Ս. էջմիածնից բաժանման:

Ա. Բ. է. և Ը կկտերը վերաբերում են Իրանական կառավարության 1949 թվականի որոշման և Ս. էջմիածնի ու Ձեր թեմի իրեն թե սանվանական և ձևական կապա-ի և այդ օրինական պայմանից բխած կացության: Այդ շուրջ կկտերին մենք վերևում անդրադարձանք արդեն, ցույց տալով, որ՝

ա) Իրանական պետական այդ օրենքից մենք որևէ դժգոհություն չունենք և ոչինչ չենք գտնում մեղադրելի:

բ) Մայր Աթոռը հարգել է այդ օրենքը և երբեք չի փորձել այն խախտել:

գ) Այդ օրենքը բնավ պատճառ չի հղել, որ Ս. էջմիածնի Հոգևոր հեղինակությունը պահպանվի Ձեր թեմի վրա, և որ սերտ կապ և հարաբերություն լինի մեր միջև, ինչպես ցույց տվինք վերև հիշատակված փաստաթղթերով:

դ) Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հարգելով այդ օրենքը, անցյալ տարի առաջարկել է Ձեզ իրեն առաջնորդ իրանահայտակ և թեհրանարնակ մի հոգևորականի:

7) Հաղորդագրության մեջ հիշված երրորդ կկտում նշված պարագան մեզ հայտնի չէ իր մանրամասնությանց մեջ և չգիտենք, թե ինչ ձևով և ինչ պայմանների տակ, սրանից 7—8 տարի առաջ, հանդուցյալ Ս. Տ. Գևորգ Զ Հայրապետը, Մայր Աթոռում ստացված բողոքների հիման վրա, Թեհրան է դործուղել Լեւոնաստականի առաջնորդական տեղապահին, քննելու համար կատարված ընտրությունները: Եվ ինչքան ծանոթ է մեզ՝ Մայր Աթոռը ոչ այդ առթիվ և ոչ էլ ուրիշ առթիվ որևէ լուծարքի որոշում չի հրապարակել ու չի դործադրել:

Իսկ հարորդ թեմական ընտրությունը, կատարված 1955 թվականին, ինչպես հիշեցինք վերև, որևէ տարակարծությանց տեղի չի տվել և տեական կերպով հարաբերությունները շարունակվել են, ընականոն և ավանդական պայմանների մեջ: Ուստի և Դ կկտում հիշված պարագան ամբողջովին չի համապատասխանում իրականության:

8) Ե կկտում հիշատակված պարագան՝ 1956 թվականի աշնան Ս. Հմայակ վարդապետ Ինդույանի իրեն Հայրապետական պատվիրակ զալն է Թեհրան: Բայց թե ինչու՞ այդ պարզ և մի քանի օր տևող այցելությունը երկու տարի հետո Վերականգնող պիտի ծառայի Ս. էջմիածնից բաժանվելու, անհասկանալի է մնում:

Երուսաղեմի միաբաններից, ամերիկյան քաղաքացի, Հմայակ վարդապետին Մայր Աթոռը հանձնարարել էր այցելել պարսկահայ թեմերը, իրեն գլխավոր նպատակ ունենալով տեղում ուսումնասիրել Ձեր թեմը և այն առաջնորդով օժանդակ պալմանները, Ձեզ հետ խորհրդակցաբար:

Հոգեշնորհ Ինդույան վարդապետը, Ձեզ շատ ծանոթ պատճառներով, չկարողացավ իր պարտականությունը կատարել և նույնիսկ հայոց եկեղեցում չկարողացավ ներկա լինել սրբազան արարողությանց, ու մի քանի օրից ստիպված ձգավ մեկնել Ձեր երկրից:

Մենք այս բոլորը շատ անբնական գտանք և 1956 թվականի մայիսի 1-ի հեռագրով Վեհափառ Հայրապետը դիմեց Թեհրանի Թեմական խորհրդի, որ 1 թունիս № 635/237 և 18 հունիս № 645/245 ընդարձակ բացատրագրերով պարզեց այն պայմանները, որոնց ստիպել էին Հմայակ վարդապետին մեկնել Թեհրանից, առանց հեռավոր կերպով իսկ նշելու, թե այդ պարագան որևէ լավիով ազդել էր կամ կարող էր ազդել Մայր Աթոռի և Թեհրանի թեմի դիտահարաբերությանց վրա: Ընդհակառակը, այդ գրությունը ոչ միայն հարգալի էր, այլև հագեցված էր հավատարմության և որդիական սիրտ արտահայտություններով:

Մայր Աթոռը, ծանոթանալով Թեհրանի թեմի վերահիշյալ բացատրագրին, չներկայացրեց որևէ առարկություն և այնուհետև ևս մեր հարաբերությունները ընթացան իրենց բնականոն հունով:

9) Ինչ վերաբերում է Զ կկտին, ստիպված ենք հաստատել, թե այն նույնպես չի համապատասխանում իրականության: Տ. Բարդես վարդապետ Վար-

ժապետյանը, ընտրված լինելով Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ, Բեյրութից Ս. Էջմիածին ժամանեց, պարզուպես իբրև ճամբորդ անցնելով Թեհրանից։ Նա ոչ մի պաշտոնական հանդիպում չի ունեցել, ոչ իսկ հայոց եկեղեցի է այցելել, չունենալով Վեհափառ Հայրապետի կողմից ոչ մի հանձնարարություն։ Մայր Աթոռ Նուբիայի վեր իմաստ, թե Բարգեն վարդապետը ինչ ճանապարհով է գալու Ս. Էջմիածին։ Նա Թեհրանում մնացել է մեկ-երկու օր միայն և այդ առթիվ բարեկամական հանդիպում էր ունեցել Թեմական խորհրդի նախագահ պր. Վ. Դավիթյանի հետ, և այս վերջինը ու մի քանի այլ ազգայիններ, առիթից օգտվելով, նվերներ էին ուղարկել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի և Հոգևոր Ճեմարանի մեր ուսանողներին համար։ Եվ թեմական խորհրդի հարգարժան նախագահը ինքը խնդրել էր Բարգեն վարդապետից, որ եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, ղեկավար Կալիֆոռնիա իր վերադարձին, ջանար Պարսկաստանի վրայով անցնել, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները բերելու Պամար հավատացյալ ժողովրդին։ Եվ իբրեք, Բարգեն սրբազան հարգեց իր խոստումը և վերադարձավ Թեհրանի վրայով։ Սակայն նորին Արքեպիսկոպոսը, հակառակ Թեմական խորհրդի նախագահի ցանկության, չկարողացավ Ս. Էջմիածնի օրհնությունը տալ ժողովրդին, որովհետև Թեմական խորհրդի որոշ անդամներ փոթորիկ էին բարձրացրել Թեմական խորհրդի՝ այդ հարցին նվիրված նիստում, չհանդուրժելով Բարգեն եպիսկոպոսի ներկայությունը Թեհրանի հայոց եկեղեցում։ Եվ այդ փոթորկալից նիստից հետո, նախագահ պր. Դավիթյանը, ինքը ևս դառնացած, հայտնեց իր Բարգեն սրբազանին Թեմական խորհրդի որոշումը (իբրև միջին ճանապարհ), այն է՝ «Բարգեն եպիսկոպոս կարող է եկեղեցում ներկա լինել սուրբ պատարագին, սակայն առանց խոսք առնելու»։

Բարգեն սրբազանը, արցունքը աչքերին, հեռացել էր Թեհրանից՝ առանց կիրակի օրվան սպասելու։

Ահա մեր խոսքը իբրև պատասխան Ձեր 29 մարտ 1958 թվակիր նամակին և մարտի 6-ին հրապարակված հաղորդագրության։ Խորհում ենք, թե ճշմարտությունը և արդարությունը արևի լույսի նման պարզ են և Թեմական Պատրիարքական ժողովրդի որևէ իրավացի հիմունք չի ունեցել և չէր կարող ունենալ՝ տալու համար իր «որոշումը», որ ազգային-եկեղեցական մի դժբախտություն է, հոգևոր-բարոյական մի աղետ։

Պարսկահայությունը, Հայ աշխարհի կողից ստեղծված այս հարապատ ժողովուրդը, ինչպես կարելի է բաժանել իր Արքեպիսկոպոս Արքեպիսկոպոս Ս. Էջմիածնից։

Ո՞վ տվեց այս դժբախտ որոշումը. հարցրի՞ք արդյոք ժողովրդին։

Զի՞ք զգում, սիրելիք մեր, որ լաց է լինում հայ ժողովրդի սիրտը, և որ բողոքում են նոր-Ջուղայում հանգչող Ս. Էջմիածնի քարերը։

Զէ. չեն կարող ճիշտ լինել ոչ Ձեր նամակը և ոչ էլ Ձեր հաղորդագրությունը։ Այդ գրության ներքև չի ստորագրել և չէր կարող ստորագրել ոչ Իրանի մեջ պատվական և հարազատ ժողովուրդը և ոչ էլ հայ հոգի կրող Թեմական Պատրիարքական մի ժողով։

Հանուն նորին Վեհափառություն S. S. Վաղգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Գերագույն Հոգևոր Խորհուրդս հայտարարում է.

ա) Իրանի մեր երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը, իրենց եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով եղել են, կան ու կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև։

բ) Ազգային-եկեղեցական որևէ մարմին իրավասություն չունի Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր մայր կենտրոն Ս. Էջմիածնից։

գ) Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ուրիշ Գլուխ չունի բացի Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց Կաթողիկոսից։ Հայկական այլ եկեղեցական կենտրոններ, ինչպիսիք են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական կամ Նրուսազեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները, անդամներն են Հայ Եկեղեցու մարմին և միակ գլուխ Ս. Էջմիածնի։

ծնին, և բոլորն էլ ի հոգևորս ենթակա են Մայր Աթոռին, Հետևարար ոչ կանոնական-իրավական տեսակետից և ոչ էլ մեր սուրբ ավանդությանց և պատմական իրավասությանց լույսի տակ, հնարավոր չէ Ս. Էջմիածնից բաժանվել և կան իրավասությանց կենտրոնի կապվել: Եթե իրանահայ եկեղեցիներն ու ժողովուրդը Հայաստանյայց Եկեղեցու մեջ են գտնվում, ապա ուրեմն նրանք կարող են ունենալ միմիայն հոգևոր մի վերին կենտրոն, այն է ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հիմնված 301 թվականին Հայ եկեղեցու ծնունդով:

դ) Հետևաբար, կոչ ենք անում Ձեզ, Թեմական Պատգամավորական ժողովի անդամներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին՝ թյուրիմացությանց արդյունք նկատել Պատգամավորական վերջին ժողովի՝ Մայր Աթոռից բաժանվելու որոշումը, հետս կոչել այն ու շարունակել հավատարիմ մնալ և հոգեպես հպատակ՝ հայոց հավատի սյուն աստվածակառույց Ս. Էջմիածինին:

ե) Առաջարկում ենք Թեհրանի Թեմական Պատգամավորական ժողովին՝ ընտրել թեմակալ առաջնորդ՝ Հայաստանյայց եկեղեցու և Ս. Էջմիածնի հավատարիմ հոգևորականների շարքերից, համաձայն իրանական պետական օրենքների և Ձեր թեմական կանոնադրության տրամադրությունների:

Ս. Էջմիածնից ընդունեցեք Նորին Վեհափառության հայրապետական օրհնությունը և մեր լավագույն բարեմաղթությունները՝ Ձեր քաջառողջություն և Ձեր եկեղեցական կյանքի խաղաղության համար:

ԳԵՐԱԳՈՒՑՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀԱՆՈՒՄ

Ատենապետ՝ ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

2 մայիսի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱՄԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռը սրաի անհուն վշտով տեղեկացավ, որ Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող հերձվածող Անթիլիասի աթոռակալ Տ. Ջարեհ Եպիսկոպոս Փայասյանը 23 ապրիլ 1958 թվակիր որոշումով փորձում է իր հովանու ներքո առնել Ամենայն Հայոց Հայրապետության Թեհրանի թեմը:

Շատ տխուր է մի անգամ ևս արձանագրել, որ Անթիլիասի աթոռակալը հայտնի ու Քաճով բոլոր միջոցներով, դավադիր ուժերի անխիղճ թելադրությանց ներքե, հափշտակիչ ոտնձգություններ է կատարում, կամենալով անջատել ամիշուտի մեր եկեղեցիները և մեր ժողովուրդը իրենց Սրբություններոց Ս. Էջմիածնից և այսպիսով ծրագրված ձևով քանդել Հայաստանյայց Ս. Եկեղեցվա հաղարամյա հիմքերը:

Հերձվածող Անթիլիասի այս նոր հափշտակության փորձի առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում է ի գետնություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրապետական Աթոռներին, առաջնորդություններին, հոգևոր պաշտոնյաներին, ազգային-եկեղեցական իշխանություններին և համայն հայ հավատացյալ ժողովրդին, որ՝

1) Թեհրանի Հայրապետական րազմադարյան թեմը հափշտակելու փորձի մեջ, մի անգամ ևս դատապարտվում են՝ Ամենայն Հայոց Վեհապալատ Հայրապետի 20 դեկտեմբերի 1957 թվականի սրբատառ կոնդակով արդեն իսկ դատապարտված Անթիլիասի ապօրինի աթոռակալ Տ. Ջարեհ Եպիսկոպոս Փայասյանը և նրա գործակիցները՝ իրենց այս նոր արարքի համար:

2) Թեհրանի Թեմական Պատգամավորական ժողովի 1958 թվականի փետրվարի 26-ի, ինչպես նաև Տ. Ջարեհ Եպիսկոպոսի 1958 թվականի ապրիլի 23-ի որոշումները հակաօրինական են և հակառակ՝ Թեհրանի թեմի հավատացյալ ժողովրդի կամքին և հոգևոր-ազգային շահերին:

3) Մայր Աթոռը այդ որոշումները նկատում է լեզյալ, իրանի Հայրապետական երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը իր եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքո:


4) Կանոնական-իրավական տեսակետից և մեր սուրբ ավանդությունների և պատմական իրավասությանց լույսի տակ, հնարավոր չէ Ս. Էջմիածնից բաժանվել և կապվել այլ եկեղեցական կենտրոնի:

ԳԵՐԱԳՈՒԹՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

12 հունիսի 1958 թ.

Ս. Էջմիածին





ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՀԱՎԱՏԱՅՑԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՈՂՈՔԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Վեց ամիս է անցել 1957 թվականի դեկտեմբերի 20-ից, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի հրապարակումից, երբ Նկեղեցու և Ազգի առաջ հԱթոռո զատապարտվեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող Անթիլիասի աթոռակայի՝ էլմիածնական թեմերում կատարած Նկեղեցական պառակտիչ տանձգությունների:

Երկար և հետևողական խաղաղասիրական հորդորներից և միասնության կոչերից, խաղաղության առաջարկներից, նույնիսկ հանուն համերաշխության կատարված զիջումներից հետո, Վեհափառ Հայրապետը խորունկ վշտով և ծանր սրտով արձակեց իր պատմական հայրապետական զատավճիռը Անթիլիասի հերձվածի և նրա տիտուր գերակատարների մասին: Ապառվեցին բարի կամեցողության, համերաշխության բոլոր կարեկրությունները: Նոնդակում կշռված ձեռով և պերճախոս փաստերով ցույց էր տրված Անթիլիասի տաքնապի իսկական ընդուն ռեճնաճատական:

Վեհափառ Հայրապետի կոնդակը պաշտոնապես կարդացվեց և շերտորեն ընդունվեց բովանդակ հավատացյալների կողմից՝ մեր բոլոր Նկեղեցիներում: Հայ ժողովուրդը, հայ մամուլը, ազգային-Նկեղեցական կալմախերությունները, համաձայն յիմանով Հայրապետի զատավճիռն, այն որակեցին

ամեն տեղ ռարժան և իրաւ և իրենց զատապարտության վճռական խոսքն ասացին, անարգանքի սրունին զամենով Անթիլիասի ողբերգության գերակատարներին, որոնք որոշել են քանդել մեր ազգային-Նկեղեցական միասնականությունը, միջազգային շուկաների վրա վաճառել ամեն սրբություն:

Վեհափառ Հայրապետը իր պատմական կոնդակով ցույց տվեց, որ Մայր Աթոռը իր ամբողջ կարելին արեց, առաջը առնելու համար Նկեղեցական հերձվածի և պառակտման: Հայ Նկեղեցու ախօրվա տագնապի ամբողջ պատասխանավորությունը ընկնում է Անթիլիասի ուղեկորությունների և նրանց քաղաքական տերերի վրա:

Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի հետ միասին, Անթիլիասի ուղեկորությունների դեմ իր բողոքի արդար ձայնը բարձրացրեց նաև մեր ներքին թեմերի հայ հավատացյալ ժողովուրդը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, մեր ներքին թեմերում պաշտոնապես և հանդիսավոր իրադրության մեջ կարդացվեց Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբեր 20 թվակի սրբատառ կոնդակը ի լուր բարեպաշտ ժողովուրդան: Թեմակալ առաջնորդները, առաջնորդական փոխանորդները հանդես եկան հայրապետական կոնդակի լուսարանման, նշանակության

մասին լուսատրակա՞ն քարոզներով: Բոլոր թեմերում ինքնարուխ կերպով և հավատացյալների նախաձեռնությամբ կազմակերպվեցին ժողովներ, որտեղ միահամուռ կերպով պաշտպանվեցին Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի ոգին, պատմական նշանակությունը և դատապարտվեցին Անթիլիասն ու նրա ուղեկից մամուլի և մարդկանց ոտնձգություններն ու դավերը, որոնք եկեղեցասիրության կեղծ պիտակի տակ, «հակահամայնափայտական պայքարի» չափազանց թափանցիկ վարագույրի ներքո, աշխատում ձև գրավել Ս. Էջմիածնի թեմերը, պառակտել Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքը, սուր բարձրացնել Ս.

Էջմիածնի և Հայրենիքի դեմ, գլուխ բերելու համար վերջնական խզում Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության միջև:

Հավատացյալների այդ ժողովներն անցան Էջմիածնասիրության, եկեղեցասիրության և հայրենասիրության ջերմ և ինքնասրտիկ զգացմունքների, դեպի Ս. Էջմիածինը հավատարմության, նվիրման, որդիական անկեղծ և սրտառու սիրո և հպատակության մաղթանքների և ցանկությունների տակ: Այդ ժողովներում միահամուռ հավանություն գտան Անթիլիասի ոտնձգությունները դատապարտող ժողովրդական բանաձևեր, հաղարավոր հավատացյալների սուրբադրություններով:

ԱՐԱՐԱՏԱՆ ԹԵՄ

Նրեանի Ս. Սարգիս եկեղեցում կայացած Արարատյան թեմի րազմամարդ բողոքի ժողովում, հանուն Արարատյան թեմի, Անթիլիասի ոտնձգությունների մասին գտտապարտության խոսք ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Կալամատարյանը:

«Անթիլիասի հերձվածք.— ասաց Տ. Վահան վարդապետը.— քաղաքական մի կուսակցության կողմից ծրագրված, օտարներից քաջալերված և ուղեկորույշ մի շարք

հոգևորականների միջոցով իրադրծված մի ձեռնարկ է, որն իր սուր ծայրով ուղղված է Հայ եկեղեցու դեմ, նրա դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի դեմ և մեր Հայրենիքի դեմ: Ահա թե ինչու, այսքան հորորներին հետո, ինչպես նշվել է Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակում, ճեղքվածքը փոխանակ փակվելու, ավելի խորանում է և լաքանում: Պետք է ես մղել այն ձեռքերը, որոնք քանդում են մեր դարավոր եկեղեցին, մեր սուրբ ավանդությունները:

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Շիրակի թեմի հավատացյալները, Թեմական խորհուրդը, քահանայից դասը, Լեւինականի Ս. Աստվածածին եկեղեցում գումարած իրենց 1958 թվականի մարտի 8-ի ժողովում, միաձայն ընդունեցին Անթիլիասի ոտնձգությունները դատապարտող հետևյալ բանաձևը.

«Մենք՝ Շիրակի հայոց Թեմական խորհուրդը, քահանայից դասը և բոլոր հավատացյալները, որ քայլ առ քայլ և սրտատրոփ հետևում ենք սփյուռքահայ եկեղեցական կյանքի ընթացքին, խորապես վշտացած ու վրդովված ենք Անթիլիասի մի խումբ միաբանների եկեղեցավեր և ազգաքանդ գործունեությամբ, որը հետզհետե անարգել ծավալվելով, այսօր վտանգավոր հանգամանք է ստանում, այնկոծելով սփյուռքահայ ազգային-եկեղեցական ողջ կյանքը:

Միանգամայն դատապարտելի է Անթիլիասի ուղեկորույթների անհեռատես և անպիշող կեցվածքը նորին Ս. Օսեթյուն Ամեն

նայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հաշտարար և շինիչ առաջարկների նկատմամբ:

Մենք հայտնում ենք մեր խորին վրդովմունքը և դատապարտում Տանն Կիլիկիս Կաթողիկոսության անուսով գործող Անթիլիասի աթոռակալի անլուր ոտնձգությունները, որով նա փորձում է իր իշխանությունը տարածել Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի մի քանի եկեղեցիների և Սփյուռքի մեր մյուս թեմերի վրա:

Միաժամանակ մենք կոչ ենք անում Մայր Հայրենիքի և ամբողջ աշխարհի ազնիվ ու ճշմարիտ բոլոր հայերին՝ այս բախտորոշ օրերին ի սեր Աստուծո, ի սեր մեր սուրբ հավատի և աստվածակերտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հանուն մեր եկեղեցու և Ազգի միասնության, հանուն մեր եկեղեցու և Ազգի ապագայի, մեկ մարդու պես համախմբվել մեր հավատի հրեղեն սյուն և հավիտենական սրբություն Ս. Էջմիածնի ու նրա արժանավոր Գահակալի շուրջը և թույլ չտալ մեր եկեղեցուց ներս

դեմ, որոնք փառքից կուրացած, մոռցած հկեղեցական ուխտ և կոչում, աշխատում են Սփյուռքում հկեղեցական պառակաում ստեղծել և հայության սիրտը պոկել Ս. Էջմիածնից:

Հայաստանյայց Եկեղեցին հայ ժողովրդի հետ, Ամենայն Հայոց Հայրապետության հովանու ներքո կազմում է մի հոտ և մի հովիվ: Ուժերը վարձկան հովիվների

նման աշխատում են պառակտել այդ միասնական հոտը, դրանք հայ հոգուց, հայ հավատից դատարկված մարդիկ են: Ահեժք նրանց շար գործին:

Բողոքի նմանօրինակ լանաձևեր ստացվել են նաև Մոսկվայի հայ համայնքից, ինչպես նաև ներքին այլ թեմերի մտավորականներից, հասարակական ծանոթ անձնավորություններից:

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄ

Նորիմ Ս. Օծուխուն Վեհափառ Հայրապետի անունով Բովսարեստից ստացված Խեմական և Ժուլական խորհուրդների, Մշակութային տան խորհրդի և համայն հավատացյալ ժողովրդի անունից մայիս 26 թվակիր բողոքի հեռագրում ասվում էր.

«Բուքրեջի ազգային իշխանությունները և հայ հավատացյալները, ունենդրելով Ձերդ Ս. Օծուխյան կոնդակը Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անցյալի և ներկա վիճակի մասին, բուռն կրողոքեն անթիլիասականներու Հայաստանյայց Եկեղեցվո միասնականությունը խանգարելուն դեմ, նկատելով դիրենք

Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովրդի պառակտիչներու Այս առթիվ վերստին կհայտենեք մեր հավատարմությունն ու սերը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Ձերդ Վեհափառության:

Հայ ժողովրդի սրտառույ միասնականություն, արթնամտության և կորովի առաջ կփշվեն ստի, կեղծիքի, դրպարտության բոլոր ամբողջները, կպարտվեն շարության ուժերը և ի վերջո կհաղթանակեն հկեղեցաշեն կանտոնը և ազգային առողջ դիտակցությունը:

Ամեն տեղ հայ ժողովրդի սիրտը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ է:





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՍՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԻՆԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱ՝
ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք
նորին Սրբություն Ալեքսի սիրալիր հրավե-
րը ուրախությամբ ընդունելով, Վեհափառ
Հայրապետը մայիսի 9-ի առավոտյան մեկ-
նեց Մոսկվա, մասնակցեցու համար Ռուս
Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության
վերահաստատման 40-ամյակի հանդիսու-
թյուններին:

Փերագույն Հոգևոր Խորհրդի, միաբանու-
թյան, Հոգևոր Զեմարանի ուսուցչական կազ-
մի, ուսանողության և Մայր Աթոռի պաշտո-
նեության ուղեկցությամբ Վեհափառ Հայրա-
պետը մեկնեց Երևանի օդանավակայանը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու
համար օդանավակայան էին եկել նաև Հայ-
կական ՍՍՌ Մինիստրների Սովետին առըն-
թիր Հայ Իկեղեցու ղործերի խորհրդի նախա-
յահ պր. Ս. Գասպարյանը, Խորհրդի նախա-
յահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը,
Արարատյան թեմի առաջնորդական փոխա-
նորդ Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գա-
լամդարյանը, քահանայից զասը և հավա-
տացյալ ժողովրդի ստվար բազմություն:

Ժամը 9.50-ին նորին Վեհափառությունը
իր շքախմբի հետ (գերաշնորհ Տ. Վարդան
եպիսկոպոս Սահակյան, հոգեշնորհ Տ. Մես-
րոպ վարդապետ Անթարյան, դիվանապետ
պր. Հ. Առաքելյան) խանդավառ բարեմազ-
թյուններով և ծափահարությունների տակ
բարձրացավ ինքնաթիռ և ուղևորվեց դեպի
Մոսկվա:

Մոսկվայի օդանավակայանում նորին Ս. Օ-
ծությունը դիմավորելու էին եկել Կրուտիցկու
և Կոլոմենայի միտրոպոլիտ Նիկոլայը, գե-

րաշնորհ Սերգեյ եպիսկոպոսը, Սերաֆիմ ա-
րեղան, Մոսկվայի հայոց եկեղեցու ներկա-
յացուցիչ հոգեշնորհ Տ. Նդիշե վարդապետը,
եկեղեցական խորհրդի անդամներ, Ան-
տիոքի Պատրիարքության Մոսկվայի ներ-
կայացուցիչ Վասիլի եպիսկոպոսը, Բուլղա-
րիայի Պատրիարքության Մոսկվայի ներկա-
յացուցիչ Անտոնի վարդապետը, ՍՍՌՄ Մի-
նիստրների Սովետին առընթեր Կրոնական
պաշտամունքների խորհրդի պատասխանա-
տու աշխատակից պր. Սոլովյովը, այլ պաշ-
տոնական անձնավորություններ և հավա-
տացյալներ:

Վեհափառ Հայրապետի երևալը դիմավոր-
վեց ծափահարությամբ:

Նորին Սրբազնություն Նիկոլայ միտրո-
պոլիտը հակիրճ բայց լիիմաստ բարի գա-
լուստի խոսք ասելով, Վեհափառ Հայրապե-
տին ծանոթացրեց ներկաներին, Այնուհետև
նորին Վեհափառությունը իր շքախմբի հետ
առաջնորդվեց «Ուկրաինա» նորակառույց
շքեղ հյուրանոցը, որպես պաշտոնական հյու-
րը Ալեքսի Պատրիարքի:

Հաջորդ օրը, մայիսի 10-ին, Վեհափառ
Հայրապետը իր շքախմբով այցի գնաց Նո-
րին Սրբություն Ալեքսի Պատրիարքին: Սըր-
տազին ողջազորումից հետո Վեհափառ Հայ-
րապետը, իր ողջույնի և շնորհակալության
խոսքն ասելով, հայտնեց իր հոգեկան խո-
րին գոհունակությունը Ռուս Պրավոսլավ ե-
կեղեցու Պատրիարքության վերահաստատ-
ման 40-ամյակի հանդիսություններին մաս-
նակցելու համար իրեն ուղղված սիրալիր և
եղբայրական հրավերի և այն հնարավորու-

թյան համար, որ ընձեռվում է երկու քույր Եկեղեցիների և եղբայր Ժողովուրդների լսարանականությունը ավելի ևս ամրապնդելու և զորացնելու համար, որ խոսքի վերջում նորին Վեհափառությունը նորին Արքեպիսկոպոսականության մաղթեց քաջառողջություն և երկար կյանք, իսկ Ռուսաց Ուղղափառ Եկեղեցուն և ուս հավատացյալ և ազնիվ ժողովուրդին՝ բարգավաճում և երջանկություն, Ապա Վեհափառ Հայրապետը որպես նվեր նորին Արքեպիսկոպոսականության հանձնեց հայկական ճարտարապետական ուժի լավագույն մոտիվներով քանդակագործված արծաթյա մի մեծ խաչ և ավելացրեց.

Գևորգ Զ Կաթողիկոսի միջև հաստատված լսարանականությունն ու սերը և իր այցը Ս. Էջմիածին, նորին Արքեպիսկոպոսականության հայտարարեց, որ մեր քույր Եկեղեցիները այսուհետև ևս կշարունակեն համագործակցել հանուն տեղական բարեկամության և ժողովուրդների միջև խաղաղության, Վերջում նա մի անգամ ևս բարի պալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, որ շնորհակալությունը հայտնեց նվեր բերված գեղեցիկ և թանկարժեք խաչի համար ասելով.

— Իսկ այս Ս. խաչը կմնա այստեղ, մեր Պատրիարքարանի մեջ, իրեն լավագույն և



ՋԱԳՈՐՍԻՆ Ս. ՆՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՐԱՎԱՆԵՐ

— Այս խաչը հիշատակ մըն է Ձեզի՝ Հայ Եկեղեցիին կողմն։ Կմաղրենք, որ ան ըլլա ճշմարիտ և սուրբ խորհրդանշանը մեր Բույր Եկեղեցիներու և եղբայր ժողովուրդներու անսասան բարեկամության։

Նորին Արքեպիսկոպոս Ալեքսի Պատրիարքը, խորապես հուզված մանավանդ Վեհափառ Հայրապետի սրտաուռ խոսքերից, որ պատասխան խոսքի մեջ հայտնեց իր հոգեկան հուզմունքն ու ուրախությունը և ընդգծեց Հայ հնադարյան և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև ստեղծված ճշմարիտ, փոխադարձ հարգանքն ու բարեկամությունը, հայ և ուս ժողովուրդների եղբայրացման քնազավառում, Ոգեկոչելով իր և երջանկահիշատակ

ամենամկրակն հիշատակը Հայ հնադարյան Եկեղեցու Կաթողիկոսի կողմից։

Մի ժամ տևող գրույցից հետո Վեհափառ Հայրապետը լավագույն սպավորություններով հրաժեշտ առավ Ալեքսի Պատրիարքից և վերադարձավ հյուրանոց։

Կարճ հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը իր շրախմբի հետ այցելեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առինքն Ռուս Պրավոսլավ Եկեղեցու գործերի խորհրդի փոխ նախագահ պր. Պավել Չերեզնյակին և ընդունվեց ջերմ ու հարգալիք կերպով։

Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, Չերեզնյակյան Պատրիարքական Տաճարում տեղի ունեցավ Եկեղեցական հանդիսավոր արարողու-

թյուն, Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյա-
կի ակնարկը՝ Արարողությանը ներկա էին Սո-
վետական Միությանից և արտասահման-
յան զանազան երկրներից հրավիրված բո-
լոր պատվիրակությունները, Կոստանդնու-
պուլի Տիեզերական Պատրիարքության պատ-
վիրակությունը՝ Ռիադիդի արքեպիսկոպոս
Աթենագորասի գլխավորությամբ, Ալեքսան-
դրիայի Պատրիարքության պատվիրակու-
թյունը՝ Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկա-
յի Պապ և Պատրիարք Նորին Արքունի-
քիստափորի գլխավորությամբ, Անտիոքի

թյուն Կիրիլ Պատրիարքի գլխավորությամբ,
Սերբիայի Պատրիարքության ներկայացու-
ցիչը, Հելլադայի եկեղեցու պատվիրակու-
թյունը՝ Ատտիկեի և Մեկարիտի արքեպիս-
կոպոս Ցակոբոսի գլխավորությամբ, Ալրա-
նիայի Ուղղափառ եկեղեցու պատվիրակու-
թյունը՝ Համայն Ալրանիայի Արքեպիսկոպոս
Պաիսեյի գլխավորությամբ, Լեհաստանի Ուղ-
ղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ միա-
րոպոլիտ Մակարիի գլխավորությամբ, Չե-
խոսլովակիայի Ուղղափառ եկեղեցու պատ-
վիրակությունը՝ միապոլիտ Իոանի գլխա-
վորությամբ, Ֆինլանդիայի Ուղղափառ եկե-



ՎԵՆԶԱԼՈՒ ՀՈՅՐԱՊՈՍԵՐ ԶԱՐՈՐԱԿԻ ԷՈՐԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ


Պատրիարքության պատվիրակությունը՝ Ան-
տիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նո-
րին Արքունիքում Ալեքսանդրոս Գ-ի գլխավո-
րությամբ, Վրաց եկեղեցու պատվիրակու-
թյունը՝ Համայն Վրաստանի Պատրիարք-
կաթողիկոս Նորին Արքունիքում Մելքիսեդեկ
Գ-ի գլխավորությամբ, Ռումինիայի Պատ-
րիարքության պատվիրակությունը՝ Նորին
Արքունիքում Հռատինիան Պատրիարքի գլ-
խավորությամբ, Բուլղարիայի Պատրիար-
քության պատվիրակությունը՝ Նորին Արքու-

ղեցու պատվիրակությունը՝ եպիսկոպոս Պա-
վելի գլխավորությամբ, Արարողությանը ներ-
կա էին նաև Նորին Ս. Օծություն Վեհափառ
Հայրապետը Իր շքախմբով, Ինչպես նաև
ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր
Ռուս Պրավոսլավ եկեղեցու գործերի խոր-
հրդի նախագահի տեղակալ պր. Չերեզնյա-
կը, օտարերկրյա հյուպատոսարանների ներ-
կայացուցիչներ և Սովետական Միության
ու արտասահմանյան երկրների թղթակից-
ներ։

Հսկա Տաճարի ներսն ու դուրսը խոնվել էր հավատացյալների ծովածովալ բազմությունը:

Արարողությունները կատարվում էին Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքու-

Հաջորդ օրը, կիրակի, մայիսի 11-ին, միևնույն Պատրիարքական Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Անտիոքի Պատրիարք Ալեքսանդրոս Գ-ը, որի 90 տարին բոլորվում էր նույն օրը: Պատարա-



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՎՆՐ ԽԱՉՐ ԱՆՔՍԻ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ

թյան ներկայացուցիչ Աթենափորաս արքեպիսկոպոսի գլխավորությամբ, խորապես հանդիսավոր կերպով և տպավորիչ իրադրության մեջ:

Գին ներկա էին բոլոր պատվիրակությունները, ուսում հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Ռուս Պրավոսլավ

նկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Պավել Զերեդնյակը, օտար հյուպատոսարանների ներկայացուցիչներ և Սովետական Միության ու օտարերկրյա թղթակիցներ:

Պատարագի վերջավորության, Տաճարի ատյանում, Նորին Սրբություն Ալեքսին ողջույնի խոսք ասաց բոլոր պատվիրակություններին, հայտնելով իր անուն գոհունակությունը նրանց ժամանման առթիվ և Ռուս Պրավոսլավ նկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսակատարություններին նրանց բերած սիրալիք մասնակցության համար:

Պատարագն ավարտվեց ժամը 2-ին:

Ժամը 3-ին ռուկրահինա հյուրանոցի ընդարձակ և շքեղ սրահի մեջ տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթի պատիվ Մոսկվա ժամանած պատվիրակությունների և հյուրերի: Ընդունելությանը ներկա էին, բացի պատվիրակություններից և հյուրերից, ռուս լոգեդարականության բարձրաստիճան ներկայացուցիչները և այլ հյուրեր:

Մայիսի 12-ին, երկուշաբթի օրը, ժամը 10.30-ին, Ամենայն հայոց Վեհափառ Հայրապետը իր ջախստով այցելություն տվեց Ռուսիայի Պատրիարք Նորին Սրբություն Հուստինիանին: Ընդունելությանը ներկա էին Ռուսիայի պատվիրակության բոլոր անդամները: Ավելի քան կես ժամ տեղի ունեցավ շաղկապ հանձնի և բարեկամական մթնոլորտում: Աշխույժ խոսակցություն էր ծավալվել Հայ և Ռուս նկեղեցիների, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության մասին: Խոսակցության ընթացքում Հուստինիան Պատրիարքը Վեհափառ Հայրապետին հրավիրեց Ռուսիայի՝ Իբրև իր «հարազատ և թանկագին հյուրը»: Վեհափառ Հայրապետը հայտնելով իր շնորհակալությունը այդ սիրալիք հրավերի համար, իր հերթին Նորին Սրբությանը հրավիրեց այս առթիվ այցելել Ս. Էջմիածին: Հուստինիան Պատրիարքը սիրով ընդունեց Նորին Վեհափառության հրավերը և խոստացավ մի քանի օրով, հանդիսություններից հետո, ուխտի գնալ Ս. Էջմիածին:

Նույն օրը ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնապես այցելեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առնթին Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ պր. Պուզինին: Ընդունելությանը ներկա էին խորհրդի նախագահի տեղակալ պր. Գոստեր և խորհրդի աշխատակից պր. Սոլովյովը: Ընդունելությունն անցավ չեղձ մթնոլորտում:

Ժամը 3.30-ին Նորին Վեհափառությանը այցելեց Կրոնիցկու և Կոլումենայի միտրո-

պոլիտ նիկոլայը: Նորին Սրբազնությունը «Հայաստանյայց Առաքելական և մեծ նկեղեցու»,— ինչպես ինքն է սիրում ասել,— առհասանկեղծ բարեկամներից մեկն է, որը «խորին ականածանքով է նայում նրա բազմադարյան մարտիրոսությանը և հերոսական պայքարի վրա»: Ինչպես և հրճվանքով է հետևում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկա «հրաշալի վերածննդին»:

Նույն օրը, ժամը 4.30-ին, բոլոր պատվիրակությունները այցելեցին Մոսկվայի Համաժողովենական գյուղատնտեսական ցուցահանդեսը: Ազդային արժանապատվության բարձր զգացումով, պետք է շեշտել այն իրողությունը, որ ցուցահանդեսի Հայկական տաղավարը բարձր զնահատանքի արժանացավ բոլորի կողմից անխտիր: Բոլորն էլ առանձին հրճվանքով շնորհավորում էին մեկ՝ Հայաստանի և հայ ժողովրդի ձեռք բերած հիանալի նվաճումների համար, դիտության և արվեստի, գյուղատնտեսության և ճարտարարվեստի քնազավառներում: Բոլորի վրա մեծ սպավորություն էր թողել հին և նոր Երևանի պատկերացումը բնմի վրա, իր բոլոր մանրամասնություններով:

Երեկոյան ժամը 9-ին Ատտիկեի և Մեկարիտի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Յակոբոսը քաղաքավարական այցի նկավ Նորին Վեհափառության մոտ, ընկերակցությանը արժանապատիվ Ս. Մորայա-թիս ավագ քահանայի: Առաջին իսկ պահին հանձնի մթնոլորտ ստեղծվեց և խոսակցությունը ծավալվեց նկեղեցական, կրոնական հայ և հույն ժողովուրդների հարաբերությունների շուրջ: Վեհափառ Հայրապետը իրեն հիշատակ Նորին Սրբազնության նվիրեց արժաթյա մի գեղեցիկ պնակ, վրան Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նկարը փորագրված:

Սրտագին և եղբայրական ողջագոտումով ավարտվեց այս հանձնի այցելությունը:

Մայիսի 13-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, բոլոր պատվիրակությունները ինքնաշարժներով մեկնեցին Մոսկվայից 40 կմ. հեռավորության վրա գտնվող ուսական վանքը՝ Զադոբսկ, ներկա լինելու համար Ռուս Պրավոսլավ նկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Ժամը 10.20-ին պատվիրակությունները հասան Զադոբսկ, որտեղ նրանք ընդունվեցին դանդերի ղոզանջների տակ և հանդիսավորապես առաջնորդվեցին Ս. Երրորդություն մայրավանքը՝ ներկա լինելու նկեղեցական արարողության: Այդ օրը ռուս մեծ սուրբ Սերգիի տոնախմբության օրն էր:

Ժամը 11-ին, Զաղորսկի Հոգևոր Ծեմարանի դահլիճում, նորին Սրբութիւն Արքեպիսկոպոս Պատրիարքի նախագահութեամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որին ներկա եղան բոլոր պատվիրակութիւնները:

Ողջույնի ճառով նիստը բաց արեց Նորին Սրբութիւն Արքեպիսկոպոս Պատրիարքը:

Ռուս Պատրիարքութեան վերահաստատման 40-ամյակի մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ գերաշնորհ Միխայիլ Էպիսկոպոսը:

Այնուհետև ողջույնի և շնորհավորանքի խոսքեր ասացին բոլոր պատվիրակութիւնների ղեկավարները: Ողջույնի իր խոսքն ասարանի ուսանողական երգչախմբի կատարմամբ:

Նիստից հետո հյուրերը ծանոթացան Հոգևոր Ծեմարանի կյանքին ու գործունեությանը, եղան ուսանողութեան հետ, տպագրեցին ծեմարանի թանգարանը:

Այնուհետև հյուրերը առաջնորդվեցին դպի Պատրիարքարանի շէնքը:

Այստեղ բոլոր պատվիրակութիւնների անդամներին տրվեցին նվեր-հիշատակներ՝ Զաղորսկի ալբոմը և Ս. Սերգիի սրբապատկերը:

Ի պատիվ հյուրերին տրվեց պաշտոնական ճաշկերույթ, նրեկոյան վեհափառ Հայրապետ



ՎԵՃԱՓՈԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆՆԻ ԽՈՍՔԸ ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻՆ

սաց նաև վեհափառ Հայրապետը (տե՛ս ամսագրի սույն համարի 31-րդ էջում):

Նիստի վերջում Կրտսեղեկու և Կոլոմենայի միտրոպոլիտ Նորին Սրբալնութիւն Նիկոլայը հանդես եկավ ճեղդափառութիւնը և ներկա աշխարհը՝ ընդարձակ զեկուցումով:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքութեան վերահաստատման 40-ամյակին նվիրված հանդիսավոր այս նիստը փակվեց Տերունական աղոթքով՝ Զաղորսկի Հոգևոր Ծե-

սին ալցի եկան Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի հարգարժան անդամները և ղրույց ունեցան Նրա հետ՝ Մոսկվայի հայոց եկեղեցական գործերի կապակցութեամբ:

Մայիսի 14-ին բոլոր պատվիրակութիւնները թաժանվեցին խմբերի, որոնցից յուրաքանչյուրին հնարավորութիւն արվեց իր նախասիրութեան համաձայն լինել Մոսկվայի տեսարժան վայրերում:

Մայիսի 14-ին, հրեկոյան ժամը 8.30-ին, Սովետական Հայաստանի ընդարձակ դաշտում պաշտոնական ճաշկերույթ կազմակերպվեց Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի նախագահի պր. Գամալ Աբդել Նասիրի պատվին՝ նույն Ռեսպուբլիկայի Հյուսիսայնաարևելյան կողմից, Հրավիրված պատվավոր հյուրերի թվումն էր նաև Վեհափառ Հայրապետը:

Հաջորդ օրը, մայիսի 15-ին, բոլոր պատվիրակությունները եղան Լոմոնոսովի անվան Պետական համալսարանում: Հյուրերն ընդունվեցին ջերմորեն, նախքան համալսարանի ընդհանուր դիտումը: Հյուրերը առաջնորդվեցին մի գեղեցիկ սրահ, որտեղ համալսարանի պրոֆեսորներից մեկը ծանոթություններ տվեց համալսարանի շենքի, ուսանողության թվի, ուսման և դասավանդման դրվածքի, ուսանողության հանգստի, սպորտային և կուլտուրական (գեղարվեստական) սպասարկման, ընդունելության պայմանների, եղանակի, ինչպես նաև համալսարանին վերաբերյալ բազմաթիվ այլ խնդիրների մասին:

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Բուզարխայի Կիրիլ Պատրիարքին և Վրաց Մեթոդիոս Մեթոդիկոսին, Այս այցելության ժամանակ ստեղծված ջերմ մթնոլորտի մեջ նորին Վեհափառությունը նորին Արքեպիսկոպոս Պատրիարքին հրավիրեց այցելության Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Նույն օրը հրեկոյան ժամը 5-ին Բուզարխայի Պատրիարք Կիրիլը և Վրաց Պատրիարք-Մեթոդիոս Մեթոդիկոս փոխադարձ այցելություն տվին նորին Վեհափառությանը: Երեկոյան ժամը 7.30-ին, Կրեմլի մեծ պալատում, ճաշկերույթ տրվեց ի պատիվ Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի նախագահի նորին Գերազանցություն պր. Գամալ Աբդել Նասիրին՝ ՍՍՌԿ Գերագույն Սովետի նախագահության և ՍՍՌԿ Մինիստրների Սովետի կողմից:

Ճաշկերույթին պաշտոնապես հրավիրված էր նաև նորին Ս. Օծովություն Վեհափառ Հայրապետը, նորին Վեհափառության ընկերակցում էր գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը:

Մայիսի 15-ին պատվիրակությունները բաժանվեցին մի քանի խմբի և յուրաքանչյուր խումբ, իր նախասիրության և ցանկության համաձայն, մեկնեց տարբեր ուղղությամբ՝ ծանոթանալու համար Սովետական Միության կարևորագույն պատմական և ճարտարարվեստական կենտրոններին, եկեղեցական հնագույն հուշարձաններին և կյանքին: Մի խումբ մեկնեց Վեպի Ստալինգրադ, մի

որիշը՝ Կիև, իսկ մի մեծ խումբ՝ Լենինգրադ, Վեհափառ Հայրապետը ցանկացավ այցելել Լենինգրադ, Պատվիրակություններին դիմավորելու էին եկել Լենինգրադի միտրոպոլիտը, եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ:

Պատվիրակությունները առաջնորդվեցին «Նվրոպայական» հյուրանոցով:

Կարճատև հանգստից հետո պատվիրակությունները այցելեցին Լենինգրադի միտրոպոլիտին և ապա եղան քաղաքի ռուսական պատմական վանքերում և սրբավայրերում, Պետրոպոլիսյան տաճարում, արքայական դամբարաններում և քաղաքի տեսարժան վայրերում:

Մայիսի 17-ին, շաբաթ օրը, պատվիրակությունները այցելեցին Լենինգրադի աշխարհահռչակ Պետական էրմիտաժը:

Ճարտարապետական, գեղարվեստական, պատմական և հնագիտական այս հոյակապ զանազան-թանգարանը հպարտություն է ու միայն Լենինգրադցիների, ռուսական և սովետական մյուս ժողովուրդների, այլև համալսարանական Այս վիթխարի, բայց արտակարգ նրբությամբ կառուցված գեղեցիկ շենքի մեջ մանկան գուրգուրանքով պահեցին զրկած բոլոր ժողովուրդների հանճարի հրաշալի արտադրությունները:

Մեզ համար չափազանց ուրախալի էր նաև ներկա լինել Վեհափառ Հայրապետի և աղանդավոր Հովսեփ Օրբելու հանդիպմանը, որն անցավ սիրալիր և հաճելի մթնոլորտում:

Ավելի քան 5 ժամ անցինք էրմիտաժում և, անշուշտ, չկարողացանք դիտել ամեն ինչ, որովհետև այդ անելու համար առնվազն պետք էր անցնել 19 կիլոմետր տարածություն, և ստիպված եղանք հրաժեշտ տալ արվեստների, մշակույթի և պատմության այս հոյակապ կոթողին:

Հարուստ տպավորություններով էրմիտաժից վերադարձանք հյուրանոց:

Երեկոյան ներկա եղանք ժամերգության Նիկոլայան տաճարում: Այս Հոգևոր Ժամարանի դահլիճում, ի պատիվ հյուրերին, տրվեց եկեղեցական երգերի համերգ:

Մայիսի 18-ին, կիրակի օրը, Նիկոլայան տաճարում ներկա եղանք պատարագին:

Հավարտ պատարագի, որոշ հանգստից հետո, պատվիրակությունները եղան քաղաքի տեսարժան վայրերում, թանգարաններում, աստղադիտարանում, գործարաններում:

Վեհափառ Հայրապետը թարահաճեց այցելել ռուսական արվեստի թանգարանը, որտեղ դիտեց ռուսական մեծագույն նկարիչների և քանդակագործների ստեղծագործությունները: Հաճելի էր տեսնել նախադարձական հասակի (7 տարին չլրացած) երե-

ների նկարներից ցուցահանգեսը, որը կազմակերպվել էր միևնույն թանգարանի սրահներին մեկում:

Երեկոյան ժամը 7-ին, «Եվրոպեյսկայա» հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ պատվիրակությունների, տրվեց պաշտոնական ճաշկերույթ լենինգրադի միաբնակիցների կողմից: Ծաշկերույթին ներկա էին լենինգրադ ժամանած լուրջ պատվիրակությունները, Ռուս Եկեղեցու լենինգրադի հոգևորականության ներկայացուցիչները, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Ռուս Պրավասլավ Եկեղեցու գործերի խորհրդի լենինգրադի լիազորը, Խաղաղության պաշտպանության կոմիտեի ներկայացուցիչը, մտավորականության ներկայացուցիչներ, Հոգևոր Ժնմարանի դասախոսներ և ուրիշներ:

Ծաշկերույթի ընթացքում հյուրերին ողջունի խոսք ասաց լենինգրադի միտրոպոլիտը և բաժակ առաջարկեց լուրջի կենացը: Ապա բաժակաճառերով հանդես եկան պատվիրակությունների ղեկավարները: Ծաշկերույթի ընթացքում նորին Վեհափառությունը խոսք առնելով իր շնորհակալությունը հայտնեց սրտաբաց և չերմ հյուրերնայության համար և միաժամանակ ընդգծեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի առթիվ կատարված հանգիստությունների պատմական-եկեղեցական նշանակությունը:

Ծաշկերույթն ավարտվեց լարեկամական, սիրային և կենսուրախ իրադրության մեջ:

Նույն գիշերը՝ պատվիրությունները վերադարձան Մոսկվա:

Մայիսի 20-ին ժվպրաինա» հյուրանոցում, Վեհափառ Հայրապետին այցելության եկավ նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը և չերմ ու սրտագին դրուցից հետո Վեհափառ Հայրապետին հանձնեց Ս. Դիմիտրիի առաջին կարգի շքանշանը: Նորին Արքությունը նվերներ բաշխեց նաև Հայ Եկեղեցու պատվիրակության մյուս անդամներին:

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետի բարեհաճ ընդունելությանն արժանացան Մոսկվայի պատվարժան ազգայիններ, արվեստագետների և մտավորականության ներկայացուցիչներ:

Երեկոյան ժամը 7.30-ին, «Ուկրաինա» հյուրանոցի ճաշասրահում, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Ռուս Ուղղափառ Եկեղեցու գործերի խորհրդի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ եկեղեցական պատվիրակությունների: Ծաշկերույթի ժամանակ բաժակաճառով հանդես եկավ Խորհրդի նախագահի տեղակալ պր. Պավլի Զերեդնյակը և ողջունեց լուրջ մեծա-

նուն հյուրերին ու բարի ճանապարհ մաղթեց նրանց:

Մայիսի 21-ին Ռուսիայի Պատրիարք Հուստինիանը, իր շքախմբի հետ միասին, փոխադարձ այցելություն տվեց Վեհափառ Հայրապետին:

Նյու-Դե-Լուս ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելությանը եղավ ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդում, որտեղ դիմավորվեց կոմիտեի նախագահ պր. Պուլիսի, նախագահի տեղակալներ պր. Գոսսմեյ և պր. Սոլովյովի կողմից:

Հնդկությունում ներկա էր նաև Հայրապետ ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը:

Մայիսի 22-ին, հինգշաբթի օրը, հին տոմարով Համբարձման տոնին, Վեհափառ Հայրապետը այցելեց Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցին: Զանգի ուրախ դղանջների տակ, շարականների նրբակցությամբ, նորին Վեհափառությունը սուրբնորդվեց եկեղեցի և ներկա եղավ Ս. Համբարձման տոնի առթիվ մատուցված սրբազան պատարագին: Պատարագին էր հոգեշնորհ Ս. Սեսրոպ վարդապետ Անթարյանը, ժայր մերձ-ի ժամանակ քաղաքից Վեհափառ Հայրապետը օրվա տոնի խորհրդի մասին և խրախուսիչ լուրեր հաղորդեց հավատացյալներին: Մայր Սթոնի շինարարական, մշակութային, ազգային-եկեղեցական կյանքի մասին, Հավատացյալները գոհունակությամբ և մխիթարությամբ լսեցին Մայր Աթոռում սկսած նոր կյանքի մասին և մանավանդ հոգեկան խորին հրճվանքով ընդունեցին Վեհափառ Հայրապետի հրավերը՝ Ս. Էջմիածին ուխտի գալու:

Հավատ պատարագի սկզբից հայ հավատացյալների սրտառու աղահամբույրը, Բուրբի շրթներից լսվում էին սրտագին բարեմաղթություններ Վեհափառ Հայրապետի երկարակեցության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետագա էլ ալելի բարգավաճ կյանքի և պայծառության համար:

Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ առնելով իր սիրելի հավատացյալներից, վերադարձավ հյուրանոց: Քիչ հանգստից հետո Վեհափառ Հայրապետը իր հրաժեշտի վերջին այցելությունը տվեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին: Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանի դարասի մոտ դիմավորվեց Կրուտիցկու և Կուլմենայի միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Նիկոլայի կողմից և ապա առաջնորդվեց Պատրիարքի ընդունարան: Սիրային և բարեկամական ողջագուրումից հետո Վեհափառ Հայրապետը նորին Սրբազ-

նության հայտնեց իր հոգեկան խորին դուստապետությունը՝ ցուցաբերված այսքան սրբապաշտի և ջերմ ընդունելության համար, ապա ավելացրեց. «Այս օրերը մեր Եկեղեցիներում պատմության մեջ կարճամագրվին իրենք ազատության մեջ կարճամագրվին իրենք և համագործակցության օրեր»:

Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը իր հերթին արտահայտեց իր սրտի անկեղծ ուրախությունը, որ Հայոց Հայրապետը, Ռուս եկեղեցու ազգային մեծ տոնին բարեհաճել էր ընդունել իր հրավերը և մասնակցել անձամբ հանդիսություններին:

Ապա Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Ալեքսի Պատրիարքից և ուսա բարձրաստիճան հոգևորականներից:

Հյուրանոց վերադարձին, Վեհափառ Հայրապետը մի քանի րոպեով այցելեց Ասլամազյան քույրերի և տաղանդավոր քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Գրեթե, ժամը 11.20-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մեկնեց Մոսկվայից: Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել Ռուսաց Պատրիարքության ներկայացուցիչներ Մինսկի միտրոպոլիտ Պիտրիմը, Նովգորոդի եպիսկոպոս Սերգեյը և Սերաֆիմ արեղան, ՍՍՍՐ Մինիստրների Սովետին առնթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ պր. Գոստեր, Հայկական ՍՍՐ Մինիստրների Սովետին առնթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Մոսկվայի հայոց եկեղեցու եկեղեցական խորհրդի պատվարժան անդամները և հայ հավատացյալների ներկայացուցիչներ:

Մայիսի 23-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանեց Սրբան:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանություն անդամները, Հոգևոր

Ճեմարանի դասախոսական կազմը ու ուսանողությունը, Մայր Աթոռի աշխարհական պաշտոնեությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ռուս Հայկական ՍՍՐ Մինիստրների Սովետին առնթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գոսպարյանը և հավատացյալների ըստվար բազմություն:

Վեհափառ Հայրապետը օդանավակայանից ուղևորվեց դեպի Ս. էլմիաթին և շքաշահառով առաջնորդվեց Մայր Տաճար:

Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի բարի վերադարձի առթիվ ջերմ խոսք ասաց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, Մայր Աթոռի աշխարհական պաշտոնեության և հավատացյալների:

Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքում հայտնելով իր շնորհակալությունն ու հոգեկան դուստապետությունը սրբազան հոր սրտառու խոսքերի համար, համառոտակի ներկայացրեց իր ուղևորության շարժառիթներն ու մանրամասնությունները: Այնուհետև Վեհափառ Հայրապետը ընդգծեց այս ուղևորության ժամանակ քրիստոնյա եկեղեցիների Պետերի միջև անձնական ծանոթության ստեղծումը:

Ապա նորին Ս. Օծությունը, օրհնելով բոլոր ներկաներին, շարականների երգակցությունամբ առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց և արձակեց միաբանության անդամներին:

Մերադիր աղոթինք, որ բարին Աստված թերկար կյանք տա Հայրապետին, երկար օրեր Հայոց Հոր, հերցանկություն հայ հավատացյալ ժողովրդի, ի շինություն և հանսասանությունը Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու:

ԽԵՄՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐԿԱՆ





**ՄԵՆԵՍՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԹՈՒՍ ՊՐԵՎՈՍԼԸՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՏԱԿԻ ԸՌԹԻՎ**

«Զի՛ յարի կամ զի՛ վայելուչ,
Այլ բնական եղբարք ի միասին»:

(ՍԱՂՄ. ՃԼԲ 1)

Այս հանդիսավոր պահին, մեր նոգևոր զգայնության մեջ առավել իմաստ
և զեղեցկություն է ստանում Ս. Սաղմոսերգոյի խոսքը:

Մենք՝ տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ, տարբեր ժողովուրդների
զավակներ, հեռու աշխարհներից եկած ու հավաքված այստեղ, Քրիստոսով
եղբայրացած ենք և Քրիստոսով արախանում ենք Ռուս Պապովսլավ Ս. Եկե-
ղեցու մեծ տոնի առթիվ, որովհետև բոլորս էլ գործում ենք Քրիստոսի Ս. Ավե-
տաբանի փառքի համար: Եվ իրոք, ինչքան բարի է, ինչքան վայելուչ է, որ
մենք, եղբայրներ ի Քրիստոս, բոլորս միասին ենք այսօր:

Քրիստոսի փառքի համար ապրող ու գործող մի մեծ և զորավոր զինվո-
րություն է Ռուս Պապովսլավ Ս. Եկեղեցին, որ դարեր, դարեր շարունակ հան-
դիսացել է ճշմարիտ հավատի բերդ և ոգեկան լույսի աղբյուր ու հոգևոր
խաղաղության նավահանգիստ, ծովից ծով և օվկիանոսից օվկիանոս տարած-
վող Ռուսական աշխարհի մեջ: Եվ այսօր էլ հա նույն հավատի բերդն է, նույն
լույսի աղբյուրը, նույն խաղաղության նավահանգիստը հավատացյալ հոգի-
ների համար, իմաստուն և հեղինակավոր հովապետությանը ներքև նուրին
Սբբություն Ալեքսի Պատրիարքի:

Այսօր Պապովսլավ Ս. Եկեղեցին և ռուս աստվածասեր ժողովուրդը, տո-
նական զգեստներ հագած, ցնծությամբ են հիշում պատմական րվակներ,
երբ քառասուն տարիներ առաջ վերահաստատվեց Ռուսական Եկեղեցու Պատ-
րիարխությունը իր վեհիրավ բոլոր իրավունքներով: Այսպիսով հա վերստին
տիրացավ իր ավանդական տիազոսին և վերստին մտավ իր բուն և ճշմարիտ
նոգևոր առաքելության նախապարհի մեջ:

Մեզ, որպես Հովվապետ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, ուրախությամբ և զրկարաց ընդունեցինք Մեզ եղած հրավերը, և անա այստեղ ենք Ձեր բալբի կողմին և Ձեզ նման երջանիկ, իբրև ճշմարիտ Եղբայր և բարեկամ:

Ճշմարիտ Եղբայր և բարեկամ, այո՛, որովհետև անա ավելի քան երկու հարյուր տարիների քրիստոնեական եղբայրական սիրո և փոխադարձ հարգանքի ու գործակցության արմատացած կապեր կան մեր երկու Եկեղեցիների և մեր երկու ժողովուրդների միջև: Այդ կապերը անփակտելի են դարձել մեր հավատացյալ ժողովուրդների աղոթքներով և արյունով գրված պատմությամբ: Այդ կապերը ամուր և անփակտելի կմնան հավիտյան: Եվ ինչպես անցյալի մեջ, նաև այսօր և միշտ, Հայ Եկեղեցին կյիմի Ձեր կողմին, բալբ Եկեղեցիների կողմին՝ համապատասխան քրիստոսի Եկեղեցու, համապատասխան սիրո և եղբայրության ոգու մարդկանց միջև, համապատասխան աշխարհի խաղաղության:

Սիրելի՛ Եղբայր Մեր ի քրիստոս, Ձերդ Սրբություն Ալեքսի Պատրիարք Հայոց Ռուսիո, ընդունեցե՛ք Մեր սիրո ողջությունը, որ բերում ենք Ձեզ քրիստոնեական հավատի հնազույն կենտրոններից մեկի՝ Ս. Եղմիածնի սեղանից, որը ինքը մեր Տերը և Փրկիչը հիմնեց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլով, Դ դարի սկզբին. «ՐՍՏ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԻՏԵԱՆՑՆ ԶՈՐ ԱՐԱՐ Ի ՁԵՌՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԱԻ ՔՐԻՍՏՈՍԻ» (Եփես. Գ 11):

Ընդունեցե՛ք նաև Մեր և ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդի սրտից լիսած մաղբանքը, որ Աստված, պահպանիչը և բարյաց շնորհատուն, անսասան և միշտ փառքի մեջ պահե Ռուս Պապսույվ Ս. Եկեղեցին և Ձեր Պատրիարքական Դանը, ու ծաղկեցնե Ձեր հովվապետական գավազանը երկար ու երջանիկ տարիներ, խաղաղ, արևոտ օրերով:

Եվ «ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՈՒՐԱԽ ԼԵՐՈՒՔ» (Ա Թես. Ե 16), «ԵՆԻ ԻՆՔՆ ՏԷՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՑԷ ՁԵՁ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՍ. ՏԷՐ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ ԸՆԴ ՁԵՁ» (Բ Թես. Գ 16), ԱՄԷՆ:





**ՌՈՒՄԻՆԻԱՅԻ Տ. ՀՈՒՍՏԻՆԻԱՆ
Ե ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԷՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ**

Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետի հրավերով մայիսի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Բուլղարիայի Պատրիարք Նորին Արքեպիսկոպոս Կիրիլը իր շքախմբի հետ, որի կազմում էին Կլիմենտ և Մաքսիմ եպիսկոպոսները, Անտոնի վարդապետը և Վասիլի ավագ սարկավազը։

Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմը, Երևանի քահանայից դասը, Թեմական խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալ ժողովրդի ստվար բազմություն, մեծ մասամբ Բուլղարիայից հայրենադարձ հայեր։

Բուլղարիայի Սրբազան Պատրիարք Կիրիլին դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Օդանավակայանում, հանուն Վեհափառ Հայրապետի, մեծանուն հյուրին և իր շքա-

խմբին ողջույնի սրտազին խոսք ասաց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Բուլղարիայից Մայր Հայրենիք վերադարձած հայերի անունից բարի գալստյան հուզիչ ողջույնի խոսք ասաց պր. Ս. Այդինյանը։

Իր պատասխան ողջույնի խոսքում Նորին Արքեպիսկոպոս Կիրիլ Պատրիարքը իր հոգեկան խոր հուզումն ու գոհունակությունը հայտնեց ջերմագին ընդունելության և իր անձին ուղղված սիրալիր խոսքերի համար։

Ապա Սրբազան Պատրիարքը օրհնեց բոլոր ներկաներին և պաշտոնապես առաջնորդվեց Երևանի ժմատուրիստո հյուրանոցը։

Կարճ հանգստից հետո, Նորին Արքեպիսկոպոս Կիրիլ Պատրիարքը ուղևորվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Մայր Աթոռի դարբասի մոտ հյուրերը ընդունվեցին խաչով ու խաչվառով և ճշրափառաբար հանդիսավորապես առաջնորդվեցին Մայր Տաճար, որտեղ նրանց ընդուն-




ԲՈՒԼՎԱՐԻԱՅԻ ԿԻՐԻՂ ՊԱՏՐԻԱՐԺԸ ԵՐԵՎԱՆԻ ՍԴԱՆԱՎԱԿԱՑԱՆՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԿԻՐԻՂ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՅԿՈՒՄ



ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՊԱՏՃԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՇԻՐԻՄՆԵՐԻ ԱՌԱՋ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՅՈՒՐԵՐԻՆ ԽԱՆՈԹԱՑՆՈՒՄ Է ԽԱՂԿՑԱ ԴԱՀԼԻՃԸ

ենց Նորին Ս. Օծուխուն Վեհափառ Հայրապետը:

Հյուրերը ճաճար մտնելիս երկյուղածորեն հաճություններ սկսեցին իրենց ներկայացված Ս. Խաչը:

Սրտագին ողջագուրումից հետո Վեհափառ Հայրապետը Նորին Սրբությունը և Նրան ուղեկցող անձանց դիմեց ողջույնի խոսքով և շերտորեն նրանց մաղթեց բարի գալուստ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու Հայոց Աշխարհ, յանկացավ նրանց տարախ ժամանց, ընդգծելով, որ այս այցելությունը իր խոր նշանա-

րակացրեց. որ իրոք այս այցելությունը Իրեն համար անմոռանալի է և կմնա պատմական:

Այնուհետև եկեղեցական թափորով հյուրերը առաջնորդվեցին Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությունը ներկայացավ Սրբազան Պատրիարքին: Ապա հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի շինարարական աշխատանքներին և միաբանության ներքին կյանքին, եղան Մայր Տաճարում, Թանգարանում, Հոգևոր Ճեմարանում:

Ապա Վեհարանում տրվեց ճաշկերույթ ի



ԲՈՒՆԱԿԱՆ ԳԵՅԱԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆՔԻ ՄԵՍ ԴԱՐԱՆՈՒՆԵՐՈՒ

կույթամբ արժանի պիտի լինի պատմական կույժելու:

Վեհափառ Հայրապետի ջերմ խոսքերին պատասխանեց Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքը և իր հոգեկան խորին երջանկությունը հայտնեց ժանգնահատելի և անփոխարինելի պատեհության համար այցելելու Ս. Էջմիածինը, հնադարյան այս հավատի կոթողը, Հայոց Հայրենիքը, և տեսնելու Արարատ սրբազան լեռը: Ապա եզ-

պատիվ Կիրիլ Պատրիարքի, Սեդանի վրա ռաժակաճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետն ու Կիրիլ Պատրիարքը:

Կիրակամտի ժամերգության ներկա լինելուց հետո Կիրիլ Պատրիարքը իր շքախմբով վերադարձավ Երևան:

Երևանում հյուրերը եղան մայրաքաղաքի մի քանի տեսարժան վայրերում:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը այցելեց Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքին:



Մայիսի 25-ին, կիրակի, Հոգեգալստյան տոնին, Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի Պատրիարք Նորին Սրբութիւն Հուստինիանը իր շքախմբի անդամների՝ Վասիլի և Ժուստին միտրոպոլիտների և Նյազա ավագ քահանայի ուղեկցութեամբ։


Նրանի օղանավակայանում Հուստինիան Պատրիարքը պաշտոնապես դիմավորվեց Գերագույն Հոգեոր խորհրդի անդամների և Մայր Աթոռի միաբանութեան կողմից, Սահակ արքեպիսկոպոսի գլխավորութեամբ։ Օ-

րործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Սրտարուի խոսքերի և զրկարաց ու խանդավառ ընդունելության համար շնորհակալութեան շերտ խոսք ասաց Նորին Սրբութիւն Հուստինիան Պատրիարքը։

Հավատացյալների ծափողջույններից և տաճարային հետո հյուրերը առաջնորդվեցին Նրանի «Խնամարիտ» հյուրանոցը։

Կարճ հանգստից հետո հյուրերը, Բուլղարիայի պատվիրակութեան հետ միասին մեկնեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին։



Պր. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԽՈՐՀԱՆՈՒՄԻ Ե ՀՈՒՍՑԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ

ղանավակայանում ներկա էին նաև Ռումինիայից հայրենադարձ բազմաթիվ հայեր։

Նորին Սրբութեանը և ուղեկիցներին բարի դալուստի շերտ խոսք ասաց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, երբեմնի ռումինահայերի կողմից՝ պրկայծակ Աթանասյանը։ Սրբազան Պատրիարքին ողջունեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ նկեղեցու



Մայր Տաճարում Հոգեգալստյան օրը հայրապետական սուրբ պատարագ էր մատուցում Վեհափառ Հայրապետը։

Հյուրերը առաջնորդվեցին Մայր Տաճար և գրավեցին ձախակողմյան դասում իրենց համար պատրաստված գահերը։

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը քարոզ խոսեց՝ ներկայացնելով Հոգեգա-



ՌՈՒՄԵՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆՈՐ ՎԱՍԻԼԻՆ ԵՎ ԺՈՒՍՏԻՆԸ ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՅ ՕԴԱՆԱՎԱԿԱՑԱՆՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԶՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԹԱԿՈՒՄ

լըստյան մեծ տոնի կրօնական խորին խորհուրդն ու նշանակությունը և ապա ողջունեց թանկագին հյուրերին՝ Մայր Աթոռում գտնվելու նրանց երջանիկ պատեհության առթիվ, ընդգծելով այս այցելության մեծ կարևորությունը մեր Եկեղեցիների և ժողովուրդների պատմության մեջ:

Հավարտ հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագի, ողջույնի սրտագին խոսքից հետո Նորին Առաքելությունը Հուստինիան Պատրիարքը:

Վեհարանի ծաղկազարդ այգում կարճ հանգրվանից հետո, Վեհարանի ճաշասրահում ի պատիվ մեծանուն հյուրերի տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Ճաշկերույթից հետո հյուրերը մեկնեցին Երևան: Ծանապարհին նրանք այցելեցին Զվարթնոցը:

Երեկոյան ժամը 8-ին Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Ռուսիայի Պատրիարք Նորին Առաքելությունը Հուստինիանին:



ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՐ, ՀՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԽՔԸ — ԱՎ ՊՐ. Ս. ԳԼԽԱՐԱՅԱՆԸ ԶՐՈՒՅՑԵԼՈՒ

Վեհափառ Հայրապետը, շրջապատված Հուստինիան և Կիրիլ Պատրիարքներով և նրանց ուղեկիցներով, շարականների երգակցությամբ առաջնորդվում է Վեհարանի Մաղկյա դահլիճը, որտեղ Հոգեգալստյան տոնի առթիվ, հանուն ներկաների և հայ հավատացյալ ժողովրդի, Նորին Ս. Օծուխյանը շնորհավորում է դերաշնորհ Տ. Սահակարքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով արձակվում են բոլորը:

Գրչերվա ժամը 9-ին, «Խնտուրիստ» հյուրանոցում, ի պատիվ թանկագին հյուրերի, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանի կողմից տրվեց ճաշկերույթ:

Ընդունելության ժամանակ փոխանակվեցին բաժակաճառեր:

Ճաշկերույթն անցավ ուրախ և սիրալիր իրադրության մեջ:

Այնուհետև նորին Արքուքյուն Կիրիլ Պատրիարքը և Իր պատվիրակության անդամները չրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից՝ չալորդ առավոտյան իրենց մեկնելու առթիվ՝ Վեհափառ Հայրապետը Բուզղարիայի պատվիրակության բոլոր անդամներին համանկնց չիշատակ-նվեցրեց։



Մայիսի 26-ի առավոտյան, Բուզղարիայի Պատրիարք նորին Արքուքյուն Կիրիլը, Բրուզնիցներով, ինքնաթիռով մեկնեց Երևանից Մոսկվա։

Մոսկվա մեկնելուց առաջ չրաժեշտի հուզիչ և սրտառուչ խոսք ասաց Կիրիլ Պատրիարքը և հայտնեց Իր շնորհակալությունն ու գոհունակությունը այնքան զրկարաց «հայկական հյուրընկալության» համար, միաժամանակ արտահայտելով Իր անընչելի ապավորությունները նորին Վեհափառությունից, Մայր Աթոռից և «իսպառանջ» Երևանից։

Ողջագուրումներից և աշահամբույրից հետո հյուրերը բարձրացան ինչնաթիռ և մեկնեցին Մոսկվա։



ՎԵՀԱՓԱՐ ԿԻՐԻԼ ԶԱՅՐԱՊԵՏԸ ԶՅՈՒՐԵՐԻ ԶԵՅ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՅԿՈՒՄ

Ռտնկազին հյուրերին ճանապարհելու համար ողանավակության էին եկել պաշտոնական ունձինք, Մայր Աթոռի միարանությունը Սահակ արքեպիսկոպոսի գլխավորությամբ, հկնդեցական դասը և հավատացյալներ։

Հյուրերին ճանապարհեց նաև Հայկական ԱՄՌ Միներտրների Սովետին առընթեր Հայնկեղեցու զսրժերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։



Նույն օրը Ռումինիայի Հուստինիան Պատրիարքը և Իր շքախմբի անդամները ծանոթացան Երևանի տեսարժան վայրերին և ապա ժամը 12-ին եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում։

Վեհաբանի դահլիճներում և կանաչադարդ ալգում, Վեհափառ Հայրապետի և Հուստինիան Պատրիարքի միջև տեղի ունեցավ բարեկամական զրույց։

Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ այնուհետև հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի կյանքին, եղան Մայր Տաճարում, Թանգարանում, Հոգևոր Ծեմարանում, դիտեցին վանքի բարեգործման և այլ շինարարական աշխատանքները, այցելեցին Ս. Հռիփսիմեի վանքը և Վեհարանի նոր շենքը:

Ապա Վեհարանի ճաշասրահում ի պատիվ հյուրերի տրվեց ճաշկերույթ: Ծաշկերույթին ներկա էին նաև Հալեպից որպես ուխտա-

ցի ճաշասրահում, տրվեց հրաժեշտի ընթրիք ի պատիվ Հուստինիան Պատրիարքի:

Ընթրիքի ընթացքում, որն անցավ բարեկամական շերմ և սիրալիր մթնոլորտում, Վեհափառ Հայրապետը հյուրերին տվեց նվեր-հիշատակներ:

Մայիսի 27-ին, առաժնոյան ժամը 9.50-ին, Նորին Արքուքյուն Հուստինիան



ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌՈՒՄԵՆ ՀԳՈՒՐԵՐԻ ՀԵՏ ՄՍՅՐ ԱԹՈՒ ԲԱՆԳԱՐԱՆՈՒՄ

վոր ժամանած տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտեռյանները:

Կարճատև հանգստից հետո հյուրերը վերադարձան Երևան:

Երեկոյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետի հետ, հյուրերը եղան Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում և ունկնդրեցին դիրիժյոր Օհան Դուրյանի համերգը:

Համերգից հետո, գինուրիստոս հյուրանո-

Պատրիարքը Իր շքախմբով Երևանից մեկնեց Մոսկվա:

Հյուրերին ճանապարհելու համար ոչանավակայան էին եկել Գերազույն Հոգևոր հորհրդի, միաբանության, աշխարհական պաշտոնեության, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմի և հավատացյալ ժողովրդի ներկայացուցիչները:

Օդանավակայան էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ

Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր.
Ս. Գասպարյանը:
Յղատնավակայանում հրաժեշտի սրտագին
խոսք ասաց Նորին Սրբություն Հուսիսիան
Պատրիարքը՝ արտահայտելով իր ամենազերմ
շնորհակալությունները սրտաբաց հյուրըն-
կալության և ցույց տրված ամենաանկեղծ
բարեկամական վերաբերմունքի համար: Նո-
րին Սրբությունը միաժամանակ հայտնեց իր
ստացած անմոռանալի տպավորությունները

Նորին Ս. Օծությունից, Մայր Աթոռից, միա-
բանության անդամներից, բոլոր բարեկամ-
ներից, Երևանից և Հայաստանից ընդհան-
րապես:

Մափահարությունների տակ հյուրերին
Մոսկվա տանող ինքնաթիռը թարձրանում է
օդ:

Բարի և երջանիկ վերադարձ մեր թան-
կագին և սիրելի հյուրերին:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՔԱՆ





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈԳԵԳԱՆՍՅԱՆ ՏՈՒՆ ԾՐԸ

Մայիսի 25-ն է, օրը կիրակի, Նկեղեցին տոնում է Հոգեգալուստը:

Գարնան վառ և պայծառ օրերից մեկն է, Հալատացիների բազմաթիւնը ուխտի է հիկել Մայր Աթոռ:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, հիկեղեցական թափորով, Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար՝ պատարագ մատուցելու:

Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազոն և Տ. Կոմիտաս սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե, Տ. Մեուրոպ և Տ. Վահան վարդապետները, հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղան և Տ. Հովհաննես քահանա Մարությանը:

Մայր Տաճարը, տոնականորեն դարդարված, պատրաստ է ընդունելու Ռումիիիայի Հոստինիան և Բուլղարիայի Կիրիլ Սրբազան Պատրիարքներին, իրենց շքախմբերով, որոնք ուխտավորաբար գտնվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Մայր Տաճարի զանգերի զվարթագին և առնական զոզանքների տակ, քույր Նկեղեցիների երկու Պետերը, Նկեղեցական թափորով, առաջնորդվում են Մայր Տաճար, Ճաշու Ավետարանի ժամանակ, Մի պահ իջման Ս. Սեղանի առաջ աղոթելուց հետո, Սրբազան Պատրիարքները առաջնորդվում են ձախակողմյան դասում գտնված իրենց աթոռները:

Դաշն և վեհ շարունակվում է պատարագը, որին հետևում են Սրբազան Հյուրերը:

Մայր Տաճարի երկու դասերում տեղ են զբաղեւ Հայկական ՍՍԲ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Նկեղեցու զործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, ռումիլահայ և բուլղարահայ ժանոթ անձնավորություններ, թղթակիցներ և այլ հյուրեր:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

«Շինուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,

ամեն»:

«Եւ յցան ամենեհեան Հոգւով Սրբով»:
(ԳՈՐԾԲ Բ 4)

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ,
Մեր Ս. Եկեղեցին այսօր կտոնէ Ս. Հոգւոյ
գալստյան տոնը:
Գործք Առաքելոցի մեջ կկարդանք շատ
կարեւոր հուշիչ պատմություններ այս
հրաշալի դէպքին, որ կատարվեցավ Հիսուսի
հրաշափառ հարությունեն 50 օր հետո:
«Եւ ի կատարել տուրցն Պենտեկոստեից
էին միարան ի միասին»:

Եվ Հիսուսի այդ համեստ աշակերտներու
հոգիները լուսավորվեցան, մտքները պայծա-
ռացան, սրտերը ջերմացան և սկսան բարբա-
ռիկ աստվածային ներշնչով մը, և անոնք
դարձան Ս. Հոգիով լեցուն և տարածեցին Հի-
սուսի Ավետարանը՝ արեւելքէ մինչև արե-
ւոստ, հյուսիսէն նարավ: Անոնք՝ Հիսուսի
առաքյալները, այս սուրբ գործը կատարեցին
ամենայն սրբությամբ՝ տանջվեցան, շարշար-



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ ԳԵՊԻ ՄԱՅՐ ՑԱԶԱՐ

Հիսուսի առաքյալները ընդմիջո քաժնե-
լով իրենց Մեծ Վարդապետեն, մնացած էին
որոացած և կսպասեին խոստացված մեծ
հրաշխին, երբ Հիսուսի ջունչը, Ս. Հոգին պիտի
գար զիրենք մխիթարելու:

Եվ այդ պատահեցավ Զառկի 50-րդ օրը,
երբ հավաքված միասին, նոգեպետ լեցված
Անոր հիշատակներով: Կսպասեին Ս. Հոգւոյ
գալստյանը: Եվ ինչպես Ս. Գիրքը կպատմէ,
«Երեւցան նոցա քաժանեալ լեզուք իբրեւ ի
հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա:
Եւ յցան ամենեհեան Հոգւով Սրբով» (Գործք
Բ 8-4):

վեցան, շատերը նահառակվեցան իսկ: Ա-
նոնք իրենց կյանքը գոնեցին, իրենց արյունը
քափեցին «վասն մեծի փառացն Աստուծոյ»,
վասն փառաց Հիսուսի Քրիստոսի և Անոր
հիմնած Ս. Եկեղեցւոյն:

Մեր Եկեղեցին ամրացած է այն սուրբ ա-
վանդության վրա, որ Քրիստոսի առաքյալնե-
րեն Թադեոս և Բարքողիմեոս եկան Հայաս-
տան աշխարհ և իրենց հետ բերին Քրիստոսի
Ավետարանը և լուսավորեցին Հայաստան
աշխարհը նոր ու նշմարիտ հավատով:
Երեւ գար հետո, այսինքն Դ դարի սկզբին,
Գրիգոր Լուսավորիչ եկավ իբրեւ նոր առաք-

յալ, իբրև նոր լուսավորիչ և զետ քաղով
լարշարանացո ճիմնեց քրիստոնեական այս Ս.
Աթոռը՝ Ս. Էջմիածինը: Հոգիի գործությամբ
Հայաստան աշխարհի մեջ քարծրացավ քրիս-
տոնեական եկեղեցվո սյուններեն մեկը, որ
եղավ հայ ժողովրդի հավատքի կեդրոնը, Դ
դարեն մինչև այսօր:

Դ դարեն ի վեր, այս Ս. Տաճարը հաճախ
սրբապղծվեցավ և նաճատակվեցավ հայ

և հարգալից վերաբերմունքով, բարոյական
աջակցությամբ կոզմե մեր սուրբ գործին:

Մենք փառք կուտանք Աստուծո, որ այսպի-
սի նպաստավոր և բարի պայմաններու մեջ
կգանձվինք:

Մեզի համար մեծ երջանկություն է, որ
այսօր, այսպիսի մեծ տոնի առիթով, մեզի
հյուր են եկած երկու մեծ Պատրիարքները
Ռումանիո և Բուլղարիո, հանձնին նորին



ՀՈՒՍՏԻՆԻԱՆ ԵՎ ԿԻՐԻՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԽՆԵՐԸ ՄԱՍԻ ՏԱՃԱՐԱՌ՝ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՐԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿ

քրիստոնեյա ժողովուրդի հետ միասին: Ս. Էջ-
միածնի պատմությունը պատմությունն է
հայ հավատացյալ ժողովուրդի կրած տառա-
պանքներուն:

Դժվար օրերը անցան, և այսօր Ս. Էջմիա-
ծինը ո՛չ միայն կանգուն է ու գորավոր, այլ
ձաղկումի և շինության, զարթոնքի շրջան մը
կապրի:

Եվ մենք, իբրև սպասավորներ, որ կռված
ենք Աստուծո սուրբ գործին ծառայելու, ուխ-
տած ենք մեր պարտքը կատարել դեպի մեր
խիղճը, դեպի մեր ժողովուրդը և դեպի այլո
հազարամյա Ս. Տաճարը:

Ժամանակները քառի են այսօր և նպաս-
տավոր, և մեր պետական իշխանությունը ա-
նա ոչ միայն որևէ դժվարության կամ արգել-
ի առջև չի դնե մեզ, այլ ան միզի նեցուկ է,

Արքություն Հուստինիանի Իր սրբազան ուղե-
կիցներով և նորին Սրբություն կիրիլի՝ Իր
շխախմբով, ինչպես նաև Ռուս եկեղեցվո ներ-
կայացուցիչ տրժանապատիվ ֆահանաներ:

Ռումեն և Բուլղար Օրոգոթոս եկեղեցիները
մեր հարազատ, բույր եկեղեցիներն են, իսկ
ռումեն և բուլղար ժողովուրդները՝ մեր հա-
րազատ եղբայրները: Բազում դարերի ի վեր
լազմարիվ հայեր կապրին Ռումանիո և
Բուլղարիո մեջ, առանց դժգոհության: Ա-
նոնք միշտ իրենց դռները քացած են տառա-
գի հայ ժողովուրդին առջև: Հայերը այդ եր-
կրներուն մեջ գտած են կյանքի ապահովու-
թյուն, ազատություն, խաղաղ պայմաններ,
ինչպես նաև հառաչդիմության ամեն տեսակ
ներաճություններ:



ՎԵՆԱՓԱՌ ԷԱՅՐԱԳԵՅԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ



ՎԵՆԱՓԱՌ ԷԱՅՐԱԳԵՅԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ՎԵՂԱՐԱՆԻ ԾԱՂԵՑԱ ԴԱՂԻՃՈՒՄ

1890—1895 թվականներում, ինչպես նաև 1920—1923 տարիներում, երբ Թուրքիայի հայերը տեղահան եղան ու նահատակվեցան, եղեռն են ազատաձեռն են շատերը, փախչում էին և անօգնական, ապաստան և ասպնջակաճուրղուն գտան ու հաստատվեցան Ռումանիա և Բուլղարիա:

1897 թվականին Թուրքիային փախստականներ են մեկն ալ Մեր հայրն էր՝ կոշկակար Աբահամ Պալեյան: Ան րադված է Բուխարեստ, ռումանական հողի մեջ և Մեր սրտին մեկ մասը կապված է ռումանական հողի հետ:

Երախտագիտության ամենաջերմ զգացումներով տոգորված, այս բռպեին, կխրնդրենք Ամենապատիվ Հուստինիան և Կիրիլ Սրբազան Պատրիարքներն՝ ընդունիլ հայ ժողովուրդի երախտագիտական զգացումներն հավաստիք, Բուլղար և Ռումեն Օրբոդոֆս նկեղեցիներն և հայրենիքներն ծաղկման և երջանկության քառեմադրություններով:

Մենք սրտագին կաղոթենք ռումեն և բուլղար ժողովուրդներն կյանքի, խաղաղության և հառաքելության համար, կաղոթենք ամբողջ աշխարհի խաղաղության և ժողովուրդներն եղբայրության համար:

Թող Աստված ֆաջառողջություն, երջանկություն և սուրբ գործոց հաջողություն պարգևե երկու սիրելի Պատրիարքներուն, յող միշտ անոնց հովվական գավազանը ծաղկած մնա, ի փառս Ռումեն և Բուլղար նկեղեցիներն և ժողովուրդներն:

Սիրելի՛ ժողովուրդ, Ս. Հոգվա գալստյան տոնի առթիվ, անգամ մը ևս ուխտենք հավատարիմ մնալ Քրիստոսի Ս. Ավետարանին, Ս. Հոգվո տված շնորհներուն և մեր նախնայց սուրբ ավանդություններուն:

«Զօրութիւն Ս. Հոգւոյն և սէր, և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ, ամէն»:

Հովարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետը քառէ գալստյան սրտագին խոսքերով դիմեց Ռումինիայի Հուստինիան և Կիրիլ Պատրիարքներին, որոնք պատասխան խոսքի մեջ խորին շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար:

Սրբազան Հյուրերը եկեղեցական Թափորով, երգով և շարականով առաջնորդվում են Վեհարանի Վեհափառ Հայրապետը, Հուստինիան և Կիրիլ Պատրիարքները դեպի Վեհարան իրենց ճանապարհի վրա, վանքի բակում սպասող բազմության կողմից որոտրնդոտ ծափերով, ծաղիկներով և ժպիտներով են դիմավորվում:

Վեհարանի Մաղկյա դահլիճում Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս բարի գալուստ մաղթելով Սրբազան Հյուրերին, նրանց ներկայացնում է պաշտոնական անձնավորությանց, Գերագույն Հոգևոր Խորհրդի, միաբանության, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, վանքի պաշտոնեական և ժողովրդական ներկայացուցիչների հետ:

Կարճ դադարից հետո Վեհարանում տեղվում է Հաշկէբուլդ՝ ի պատիվ Բուլղարիայի և Ռումինիայի Պատրիարքներին, Ճաշկերույթն անցնում է ջերմ մթնոլորտում:

Ընդունելության ժամանակ ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը, Հուստինիան և Կիրիլ Պատրիարքները, Մուղափիայի միտրոպոլիտ նորին Սրբազնություն ժուստինը և Պլովդիվի միտրոպոլիտ նորին Սրբազնություն Կլիմենտը:

Երկու ժամ տեող այս շատ հաճելի ընդունելությունը անցավ հայ, ռումեն և բուլղար ժողովուրդների և եկեղեցիների եկեղեցական-մշակութային, դարավոր կապերի և հարաբերությունների է՛լ ամփելի ամրապնդման, եղբայրացման սրտագին ցանկությամբ:

Ընդունելությունը վերացավ Հուստինիան Պատրիարքի սեղանի վրա աղտառանած գահացողական ազդեցությամբ:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ԱՊՐԻԼԻ 27-ին, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Տ. Հովհաննես քահանա Մարուդյանը և քարոզեց Հոգեշնորհ Տ. Հարություն աթեղա Մատեն-ջյանը, ոգեկոչելով խնկելի հիշատակը 1915 թվականի ապրիլի մեծ եղևոնի հայ նահա-տակաների:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ԱՊՐԻԼԻ 29-ին, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ ժամանեց Վրաստանից առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, թեմական խընդիրներով: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել առաջնորդ սրբազանին:



ԱՊՐԻԼԻ 30-ին, ԶՈՐԵՐՇԱՐԹԻ, Երեկոյան ժամը 4-ին Հոգեւոր Ճեմարանում տեղի ունեցավ ներթական դասախոսություն: Սրեանի Բժշկական ինստիտուտի դասախոս պրոֆ. Հարությունյանը խոսեց «Մարմնի առողջա-պահությունը թեմայի շուրջ» Դասախոսու-թյունը անցավ շատ հետաքրքիր:

Վերջում վերատեսուչ սրբազանը շնորհա-կալություն հայտնեց հարգելի պրոֆեսորին՝ իր շահեկան դասախոսության համար:



ԱՊՐԻԼԻ 30-ին, ԶՈՐԵՐՇԱՐԹԻ, Երեանի առաջին հիվանդանոցը փոխադրվեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը՝ թոքերի բորբոքում հիվանդությամբ: Սրբազանը հիվանդանոցում շրջապատվեց բժշկական անձնակազմի շուրջ հոգածությամբ: Ձեռք առնված բժշկական խնամքների շնորհիվ սրբազանը լրիվ առողջացած վերադարձավ Մայր Աթոռ մայիսի 21-ին, ի գլուխ իր պաշ-տոնի:



ՄԱՅԻՍԻ 3-ին, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ այցելեց ամերիկահայ տուրիստ-ների խումբը, գլխավորությամբ պր. Ազ-նակյանի: Մայր Տաճարում իրենց ուխ-տը կատարելուց հետո, ուխտավորները ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից, որը Վեհարանում շերմ գրույց ունեցալ նրանց հետ:



ՄԱՅԻՍԻ 4-ին, ԿԻՐԱԿԻ, «ՏՕՆ ԵՐԵՎԱՆ Ս ԽԱՉԻ» Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը: Քարոզեց Հոգեշնորհ Տ. Մես-րոպ վարդապետը՝ «Ջանգոլնութիւնս իմ ես ինձէն գիտեմ և մեղք իմ առաջի իմ եմ յա-մենայն ժամ» բնարանով (Սաղմ Ծ),

Սուրբ պատարագին ներկա էին Ամերի-կայից ժամանած ուխտավորները, որոնք հավարտ սուրբ պատարագի հաղորդվեցին:

Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետը ընդունեց հեռավոր երկրներից Մայր Հայրենիք ժամանած հայրենաբաղձ հյուրերին և ապա բարեհաճեց ճաշի պահել նրանց Վեհարանում: Ընդունելությունը ան-ցավ շերմ և սրտագին մթնոլորտում:



ՄԱՅԻՍԻ 5-ին, ԵՐԵՎԱՆԻ, ԵՎ 6-ին, ԵՐԵՎԱՆԻ, Վեհափառ Հայրապետի Մոսկ-վա մեկնելու առթիվ, Հոգեւոր Ճեմարանի Ա և Բ լսարանների և Գ դասարանի ուսանող-ները, ժամանակից շուտ, բանավոր քննու-թյուն հանձնեցին Վեհափառ Հայրապետի դասախոսած առարկաներից՝ փիլիսոփայու-թյունից, տրամաբանությունից և հոգեբա-նությունից: Քննությունները անձամբ ընդու-նեց Վեհափառ Հայրապետը Հոգեւոր Ճեմա-րանի հանդիսությանը սրահում: Վեհափառ Հայրապետը դուր մնաց իր առարկաների քննությունների արդյունքներից:

ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Մայր Աթոռի թանգարանի վարիչ Հոգեշնչորհ Տ. Հուսիկ Արեղա Սանթրոյանը և քարոզեց՝ «Ես եկի զի զկենսս ունիցիք, և առաւել ևս ունիցիք» բնարանով:



ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, «ՀԱՄԱՐԱՐ-ՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ» Մայր Տաճարում հանդիսավոր եպիսկոպոսական պատարագ մատուցեց Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ Գեորգյնորհ Տ. Հայկադուն սրբազանը և օրվատոնի նշանակության մասին գեղեցիկ քարոզ խոսեց շարականի ձևատարությամբ ի քաղաքից հրուսադէմ, մինչև զգննուցութիւնը և քարոզում սրբազանը անդրադարձավ նաև հիշատակին փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն ի Սոսյ ի Ս. Էջմիածին յամի Տեառն 1441:

Հավարտ սուրբ պատարագի, օրվա ազգային մեծ տոնի առթիվ, Մայր Տաճարում

կատարվեց նաև հանդիսավոր Հայրապետական մաղթանք:



ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Երկրորդ Մաղկազարդ, Արժանապատիվ Տ. Մկրտիչ Գևորգյան Միջոյանը պատարագեց և քարոզեց Հոգեշնչորհ Տ. Մաշտոց արեղա թաղիցանը՝ «Մեծահրաշ այս խորհուրդ ամենազոյաւմ առ մեզ հասնալը շարականի բնարանով:




ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, Ս. Գեղարդի վանքի նորընտիր վանահայր Հոգեշնչորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը մեկնեց իր պաշտոնատեղին, ընկերակցությամբ բարեկամներ Տ. Վարդան սարկավազ Շամյանի:



ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ժեմարանում սկսվեցին ամսվերջի քննությունները, որոնք կտեսն մինչև հունիսի 6-ը:





ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՔՐԱՀԱՄՏԱՆ

(Երևանու շրջանի Եպիսկոպոս)

ԼՈՒՍԱԿՈՐԶԻ ՏԵՍԻԼՔԸ

Կես գիշեր էր...

Լո՛ւտ՝ ապարանքն արժուին:
Իշխանքն հայոց պալատին,
Խոր փունի մեջ երազի,
Որվան խոնջենքը կառնեն:

Առկայծ նրազ մը վերեն
Կը բոցկլտա մեղմորեն:
Հոգի մը լուս, միշտ արթուն,
Իր խոնանքին մեջ ծրփուն,
Խորն իր սրտին վառ պահած՝
Նրազն հույսին Հիսուսի
Կը հսկե...:
Ու կը տեսնե, որ երկինք
Ակոս-ակոս կը պատռի.
Լույսի խառնձր,
Լույսի շողեր
Ամպերն համակ կողողեն:



Կը բացվի դուռն նրեղեն,
Լույսը լույսեն մարմնացած՝
Իրջեն հանդարտ ու խաղաղ,
Ձեռքին օսկի,
Ձեռքին ուռնակ
Լուսապրսակ:

Հարվածին տակ իր մուրնին՝
Սանդարավետք կը սարսին...:

Մեծ հսկազր գիշերվան՝
Կը թաղվի մեջ խորհրդին
Ստովածային նրաշին:

Նրապիտ աչքին սրբիտվ,
Արթուն հոգվով ու մտքով,
Աչքը հառած երկնքին՝
Կը հայի մեծ երազին...:




Տեսիլքն այդ սուրբ գիշերվան
Խորովք դարձած իր հոգվույն՝
Աչքերն ի վայր կը դարձնեն:
Ու կը տեսնե ան հստակ՝
Չորս խառնվածքն՝ ճշտված
Իրարմե ոչ շատ ճեռու:
Չորս մեծ սյուներ նրեղեն՝
Խառնվածքն դեպ՝ երկինք
Դարձած լույսի աշտանակ,
Կապած ամպե խոյակներ՝
Կամար-կամար ագուցված:
Խաչերն վրան խոյակին,
Խաչերը սուրբ լույսերու,
Ծիածանն են իրարու:

Կը կամարվի տեսիլքն այդ,
Կըլլա գմբեք մը լույսի,
Կը բարձրանա դեպի վեր,
Երկնքն ենք ալ շատ վեր,
Եվ պատվանդան կը դառնա
Լույս Աթոռին Աստուծո...:

Ծունկի կիյնա ծերունին,
Աչքերն հառած երկնքին,
Ու քեներ իր լայն բացած,
Կը մրմնջե առ Աստված.

Վույսի ստեղծիչ Արարիչ,
Խոր գիշերվան այս մութին՝
Կը պարգևես Դուռն մեզի
Երազին ձեռք՝ դարձնու
Խառնվածք մեր սուրբ հավատին
Լուսո խորան էջմիածնին...:





ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻՆ՝
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՍԵՐ ՍՐԲԱՎԱՅՐԻՆ
ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԿՍԻ ՕՐԵՐԱ

Աստվածաշնչական երեսփոխան պատմական աղբյուրների, վանքերի և տաճարների մի-
ուսիք աշխարհ է: Նրա հոյակապ տաճարներից հնագույնն է Ս. Հարություն հույ՝ զոհաբեր-
արար տաճարը, կառուցված Քրիստոսի խաչելույթից և հառույթան նվիրական վայրերի վրա:
Ցանառի կառուցումը բարձրացրել է մինչև Գ Պարի 20-ական թվականները. Կոստանդնուս-
կայանի ժամանակները:

Ս. Հարություն տաճարը ինքնիշխան մեծ քաղաքի և տնտեսական աղբյուրների, աղբյուր-
ների, վանքերի մի ամբողջություն է, որն իր մեջ ընդգրկում է հիմնականում Քրիս-
տոսի Ս. Գեորգիան, Գողգոթան, Նախնիքի տաճարը, Գյուտ խաչը և հայոց Ս. Գրիգորի Լու-
սավորիչ ճակատագիրը: Ս. Հարություն տաճարը քրիստոնեական միջազգային սրբավայր է: Նրա
զբաղված պատմականությունը-ն են հեռի իրավասու Պատրիարքությունները՝ հայոց, հունաց և
լատինաց, որոնք ամենօրյա մասնավոր պատարագ և պաշտամունք են մատուցում այնտեղ:

17 դարի հնություն ունեցող Ս. Հարություն այս տաճարի զվարճանք են շատ փոքրիկներ:
Դարերի ընթացքում տաճարը հերթափոխվել է ընտանիք և հաջորդական փոքրիկների պատե-
ման ժամանակներին, որոնցից հետագային պետք է հիշել 1927 թվականի մեծ հրկիսարարի
պատճառով լուրջ վնասները:

Իրավասու հեռի Պատրիարքությունների համաձայնությամբ, որոշվել է քրիստոնեության
այդ հնագույն ուխտավայրի վերանորոգությունը օկուպացիայի օրերին: Ընդհանուր հորոգության
ձևերը նախատեսված է մեծ միջոցներով և անհրաժեշտ ստանդարտներով, որ պիտի հաջան իրավասու
հեռի Պատրիարքությունները հավասար շահով:

Այսօր ներսառնված հայոց Պատրիարքական Աթոռը տնտեսական-նյութական ոչ բազմաթիվ
կացության մեջ է: Պատրիարքությունը չի կորցրել Ս. Հարություն տաճարի հորոգության մասին
մտածել իր անփական միջոցներով: Ս. Հարություն տաճարի հորոգության մասնակցության
հոգսը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հարց է: Դա ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՎԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐ-
ԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ է:

Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վստահ են, որ հայ ժողովուրդը, որ-
պես զոհաբեր հեռի իրավասուներից մեկը քրիստոնեական միջազգային այդ աղբյուրին,
կանգ չի առնի էությունից ոչ մի գոհարության առաջ, գոյացնելու համար Ս. Հարություն տա-
ճարի ընդհանուր վերանորոգման ծախսերի իրեն ընկած բաժինը:

ԽՍՀՄԳՐՈՒԹՅՈՒՆ

1927-են ի վեր կատարվող բանակցու-
թյունները մասնակի հաջողություն մը ա-
նանագրեցին: Հունաց, լատինաց և հայոց
Պատրիարքարանները 19 փետրվար 1958-ին
սկզբունքով համաձայնեցան վերանորոգել

Ս. Հարության տաճարին մոտոքն ու անոր
նորոգակողմը գտնվող Պատանառնողություն
ուղևատարն ու շրջանի պատերը: Իսկ հե-
տագա նիստերու մեջ որոշվեցավ գործին
հեռնարկել Ս. Հատիկեն հար:

Այս նորոգությունը առաջին օրըն է ամբողջական վերանորոգություն 1927-ին պատահած երկրաշարժը խախտած է շենքին կառույցը, որ մինչև այժմ կանգուն մնացած

շրջափակին մեջ ոչ միայն շատ վատ տպավորություն մը կթողուն, այլև կնեղցնեն միջավայրը ու կխափանեն արարողությունները: Քրիստոնեության սիրտը եղող այս




ՆՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ՇԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

է անգլիական կառավարության 1935-ին հաստատած երկսթյա և տախտակյա բարձր հենարաններուն շնորհիվ: Ասոնք սակայն, ճաճարին մուտքին առջև և Ս. Գերեզմանին

մեծ սրբավայրին երեսուն տարիներու այս անշուք և անպատվաբեր վիճակը հետևանքն է անոր սեփականատեր երեք ազգերու՝ հունաց, հայոց և լատինաց տեսակետներու տարբերության՝ նորոգության շուրջ:

Միջազգային այս մեծ սրբավայրին ներկա անփառունակ երեսույթը նախատինք մըն է նախ իր հանգամանքին և ապա իր անցյալի պատմության։ Սկսյալ առաջին դարերեն ան մեծ երկվուղաժուլյամբ հարգանքի առարկա եղած է ամենազգի ուխտավորներու։ Հետո-

հվերներով պայծառացուցած են Ս. Հարությունը, Աշխարհի յորս ծագերուն քրիստոնյաներ միշտ ցանկացած են իրենց հոգեկան ծարավը հագեցնել գեթ անգամ մը համբուրելով Ս. Գերեզմանը։ Ու հոր քաան դարերու ընթացքին ան նանդիպած է աղետներու՝



ՔՐԻՍՏՈՍՄԻ Ս. ԳԵՐԵԶԻՄԱՆԸ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՃԱՐԻ ՄԵՋ

վոր երկիրներն ամենքն ալ հոս դիմած են երկրպագելու Ս. Գերեզմանին և կատարելու իրենց ուխտը կամ մատուցանելու իրենց ծառայությունը։ Աշխարհի հզոր կայսրեր, կայսրուհիներ, իշխաններ ու իշխանուհիներ եկած ու իրենց բարեպաշտական սրտազեղ

կողոպուտի և ավերումի, քրիստոնյա սրբաբնիկ փութացած են դայն վերահաստատել իր սրժանավայել փայլուն դիրքին մեջ։ Այդ աղետներեն վերջին երկուքն էին 1810-ին մեծ հրդեհը և 1927-ին շորավոր խրկրաշարժը։

1927-ին երկրաշարժը խախտելով ամբողջ Տաճարին կառույցը, ճեղքեր հառաչ տեղավ պատերուն և սյուներուն մեջ: Քանի որ տարի ետք երբ հարկ տեսնվեցավ կաթոլիկներին— հունաց Մայր Նկեղեցին Ս. Գեթոգիկներին— հունաց Մայր Նկեղեցին Ս. Գեթոգիկներին մոտ— ծանր գմբեթը փլցնել և ընկնելն իրենց համար անհնար էր: Ուստի անգլիական ազգային լայնցած էին: Ուստի անգլիական հոգատար կառավարությունը խնդրեց հրապարակել Ուիլյամ Հարվին, պատմական շենքերից ճարտարապետը: Հիշյալը քննեց Տաճարը և հանձնարարեց հաստատել այժմուսը և հանձնարարեց հանձնարարել երկաթյա և տախտակյա հենարան-սյուները: Ասկե հետո թե՛ անգլիական հոգատար և չորդանանի կառավարությունները և թե՛ հոգատար Պատրիարքարանները հետզհետե տարիներ ընթացքին հրավիրեցին եվրոպացի մասնագետ ճարտարապետներ, ինչպես՝ Լուիջի Մարանկոնին, Վուլֆին, Բադլի Մենսը, Ժան Տրյուվիլյոն, Օլյանդոսը, Մարտիրոս Ալթունյանը և ուրիշները, որոնք քննեցին ու շենքերին Տաճարին անմիջական նորոգության անհրաժեշտությունը: Ասոնք երեք ծրագիրներ ներկայացուցին.

ա) Ի հիմանք քանդել Տաճարը և կառուցել ուրիշ մը արդիական ոճով և ավելի ընդարձակ:

բ) Պահել ներկա Տաճարին կառույցը, միայն ընդհանուր ամրացում կատարելով և բանալով Ս. Գեթոգիկների ընդարձակ շենքերը՝ երեան բերելու համար հին, կլոր սյուները: Նաև վերցնել ասոնց հենարանները և շրջակայքը գտնվող խուցերը՝ ընդարձակելու համար շրջակայքը:

դ) Պահել Տաճարին ներկա գոյավիճակը՝ միայն ընդհանուր ամրացում կատարելով: Այս ծրագիրներին առաջինը մերժվեցավ Պատրիարքարաններուն կողմից: Գալով երկրորդին, լատինաց և հայոց Պատրիարքարանները համաձայն են ադոր, իսկ հունաց Պատրիարքարանը կողմնակից է երրորդին:

1956-ին ճարտարապետներ Պարսկան, Ալուս (հույն), Հայր Գուանոն (լատին) և Մ. Ալթունյան առաջարկեցին նախ նորոգել Տաճարին մուտքը, Պատանատեղին և կաթոլիկներին գմբեթը:

1957-ին կառավարիչը առաջարկեց ավելցրվել ճարտարապետներու տեկնիկ գրա-

րենյակին իբրև պետ՝ կառավարության ներկայացուցիչ ճարտարապետ մը:

Իսկ 1958 փետրվար 19-ին, տեկնիկ գրասենյակի ճարտարապետները՝ Անժելուս Մալիոս (հույն), Հայր Գուանոն (լատին) և Գուանոն Մուսելլեմ (հայոց կողմից), երեք Պատրիարքարաններու ներկայացուցիչներու ներկայությամբ, համաձայնեցան ձեռնարկել 1956-ին որոշված՝ վերահիշյալ մասնակի նորոգությանը, Ս. Զատիկեն ետք: Մշակվեցավ նաև մանրամասն նորոգության ծրագիրը մը այդ տեղերուն համար: Այս առթիվ նամակով խնդրվեցավ կառավարիչին, որ ներառվելիք շինանյութերը մաքսազերծվին:

Զենք դիտել, թե այս նախագայլը ո՞րքան պիտի արժեն, սակայն ընդհանուր վերանորոգությունը կկարժեի արժեն մեկ միլիոն ստեռլինգ, զորս հավասարապես պիտի հոգան երեք իրավատեր եկեղեցիները, լատիններ, հայեր և հույներ: Բնական է մտածել, թե Հայոց Պատրիարքարանը լուծի նորոգության այս ծախքին իրեն ինչպե՞ղումարը, որուն հայթայթումը մեր լարնապաշտ ժողովուրդին պարտքն է: Մեր սրբավայրերը համազգային են: Յուրաքանչյուր հայ անհատ ժառանգական իրավունք մը ունի անոնց մեջ, և ուրեմն նաև պարտավորություն մը՝ իր ստացվածքը միշտ անվթար ու շեն պահելու: Որե՛կ մեկը, որ չզգար այս պարտավորությունը, կկորսցնեն իր ժառանգական իրավունքը: Եվ այսպես, եթե Ազգը չզգա նույն պարտավորությունը՝ ան օր մը կզրկվի իր ժառանգած սրբավայրերնու: Անշուշտ ոչ ոք կփափագի նախնայաց արյունով ու քրտինքով շահված ու պահպանված սրբավայրերը կորսնցնել կամ անշուք թողուլ զանոնք: Ուստի յուրաքանչյուր հայ պատասխանատուություն և պարտականություն ունի այս սրբավայրերը պայծառացնելու՝ օժանդակելով երեք հարկ կզգացվի:

Ս. Հարության տաճարը իր մեջ կրովանդակեն Ս. Գեթոգիանը, Գողգոթան, եկեղեցիները, մատուռներ և խուցեր: Ասոնցմե ռմանք կպատկանին հավասարապես հայոց, հունաց և լատինաց, ինչպես Ս. Գեթոգիանը և Պատանատեղին, և ռմանք կպատկանին երեք հարանվանություններին՝ որե՛կ մեկուն: Այսպես, հայեր ունին Բ Գողգոթան և Ս.

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները և այլ մատուռներ, Լուսավորիչի եկեղեցին, հայկական «հոլ», կես ստորերկրյա եկեղեցի մըն է՝ կանգնած շորս սյունիքու վրա: Տաճարին մեջ հրեք ազգաց արարողություններ կատարվին հաստատված ժամանակացույցի մը համաձայն: Այդ արարողություններին ամենակարևորն է սուրբ պատարագը, զոր հույներ, հայեր ու լատիններ կարգավ կմատուցանեն Ս. Գերեզմանին վրա, ամեն առավոտ ժամը 1.00—7.00, Հայեր ու՝ ին նաև թափորներ ամեն ուրբաթ, շաբաթ և կիրակի օրեր, երեկոյան ժամը 4-ին:

Բազմադարյան այս իրավունքներու, առանձնաշնորհին պահապան Ս. Հակոբյանց միաբանությունը իրեն զխափոր նպատակ ունեցած է անոնց պահպանումը և անոնց փարած է անձնվեր սիրով:

Անցնող դարերու ընթացքին ո՛չ ազգային կյանքի պայքարները և ոչ վանական ներքին հարցերը վնասած են այդ պահպանման դործին՝ քանի որ այս վերջինը հղած է գերագույն նպատակ և ուխտ: Շատ տառապած է անցյալին Ս. Հակոբյանց միաբանությունը. մեկ կողմն դավանակից եկեղեցիներ և եկող գացող կառավարություններ, և մյուս

կողմն պարտքեր ու պարտապահանջները շարունակ նեղած ու ճնշած են դայն: Սակայն ամեն ասոնք հաղթահարված են միաբանության անսպառ անձնազու՜ղ գգին միջոցով, որուն համար ան արժանացած է «զինվորյալ միաբանություն» կոչումին:


Բայց անշուշտ Սրբոց Հակոբյանց միաբանությունը իրեն միշտ ապավեն ունեցած է Աստված և հայ ժողովուրդը, որ բուն իրավատերն է իր սրբավայրերուն ժառանգության: Անցյալին մեջ հայ ժողովուրդը երբեք չէ ունեւած այդ սրբավայրերը, որոնց ոժանդակության հասած է միշտ: Այժմ ևս, երբ Ս. Հարության տաճարը անհրաժեշտարար պիտի նորոգվի, եկեղեցասեր ու ազգասեր հայօրդիներ պետք է փութան տալու իրենց լուծան Երկնավոր Հոր Տունը և Փրկչին Ս. Գերեզմանը պատվարեր վիճակի մեջ դնելու համար:

Ս. Զատիկեն հտք պիտի ձեռնարկվի Տաճարին մուտքի մասի նորոգության...

ԱՐԻՍ ԱՐԵՂԱ ՇԻՐՎԱՆՅԱՆ
(Երուսաղեմ)

(ԲԵՅՐՈՒՄ, «ԶԱՐԹՈՒՔ» օրաթերթ,
11 ապրիլի 1958 թ.)





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Դ. ԱՍԿՈՐՅԱՆ

Ն Ե Ր Ս Ե Ս Ե Ն Ո Ր Հ Ա Լ Ո Ւ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ, ՎԱՐԴԱՎԱՌԻ ԵՎ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ



Ոգեգալստյան տոնը, սկսած առաջին դարերից մինչև Ներսես Շնորհալին, տոնվել է միայն մի օր՝ հիսուն օր Զատիկից հաշված։ Հետագայում Շնորհալին տոնը դարձրել է ութ օր։ Հոգեգալստյան կամ Պենտեկոստեի առաջին օրվա շարականը, հայտնի «Առաքելոյ աղաճոյա Օրհնությունը» (սիր սարօքն) վերագրում են թե՛ Մովսես Խորենացուն և թե՛ Հովհան Մանդակունուն։ Երբ Շնորհալին ժամակարգության մեջ մտցրեց Հոգեգալստյան բազմօրյա տոնը, ինքն էլ այդ լրացված օրերի համար գրեց համապատասխան շարականներ։ Եվ որովհետև առաջին օրվա տոնն ու շարականները կային Հալոց Եկեղեցում շատ վաղուց, ուստի սկսած երկրորդ օրվանից գրված շարականները վերագրվում են Շնորհալուն։

Ըստ այսմ, Շնորհալին գրել է Հոգեգալստյան Բ, Գ, Դ և Ե օրերի շարականները։ Շարականոցի առաջարանն այս շարականների վերաբերյալ ասում է. «...Սուրբ Ներսէս Շնորհալի... զՀալոյ գալստեան շորս պատկերան»։

Բ օրվա Օրհնությունը ունի ԲԶ ձայն և բաղկացած է 6 տնից, որոնք կազմում են ծալրանուն օմէրսէս։

Հոգեգալստյան Բ օրվա Օրհնությունը՝ ընդհանուր և նման, ըստ էության դավանարանական մի շարական է։ Առաջին իսկ տնից

երևում է շարականի դավանարանական վարդապետական երանգը.

«Ենդն և նման Հօր և Որդւոյ,

Հոգիդ անեղ և համազոյ.

Բղխումն Հօր անքննարար,

Առող յՈրդւոյ անճառաբար»։

Այնուհետև տան կեսից խոսքը վերաբերում է Հոգեգալստյան դիպքին.

«Ի Վերնատունն այսօր իշեր,

Զհոգիդ շնորհաց քոց արբուցեր» և այլն¹.

Հաջորդ երկու տունը՝ «էից ստեղծող» և «Բարուն վերնոցն», Արարչին, Ժրկնակին վերնոցն ու մարգարեներին է վերաբերում։ Ս. Հոգին, իր ներգործությամբ, հովիվներից մարգարեներ և ձկնորսներից առաքյալներ է առաչ բերում։ Օրհնության 4-րդ տան մեջ նկարագրվում է Հոգեգալստյան դեպքը, ըստ Գործք Առաքելոցի պատմումի (գլ. Բ).

«Ասրսամիելի հողմոյ նման,

Ահեղազոյ սաստիկ հնյամար,

Երևեցար ի վերնատանն՝

Հոգիդ՝ դասուն երկոտասան.

Որք առ ի քէն մկրտեցան,

Որպէս զոսկի հրով մաքրեցան...»։

Բ օրվա ընդհանրապես Այ հարցի մինչև յոթերորդ տունը՝ ընդհանուր դավանարանական բնույթի է, քան թե նկարագրական.

¹ «Ձաթքոյ շարական», էջ 330.

«Անսկզբնաբար բղխումն ի Հօրէ
 Եւ համագոյակից Որդւոյն Միածնի...
 Որ կատարեալ անձնատրութեամբ,
 Եւրոպի կատարելոց մի նոյն ընտելին...
 Որ համապատիւ Հօր և Որդւոյ...
 Համագոյ Երրորդութիւն անբաժանելի...»
 Գրեթէ նույն բովանդակութեան ունեն Բ
 օրվա մյուս շարականները:
 Կանոնի Գ օրվա «Այսօր երկնայինքն սու-
 րախացան» Օրհնութեան մեջ Հոգեգալստյան
 օրվա առթիվ հրժմում է քանաստեղծը, ցըն-
 ւում և ուրախանում են երկնայիններն ու
 երկրայինները, հրեղեն և հողեղեն արա-
 րածները, որովհետեւ մարդուն ու տիեզեր-
 քին վերածնող ու նորոգող Հոգին իբրև է
 «ի սուրբ Վերնատանն», որով նորոգվել է և
 առաքյալների դասը:

«Այսօր երկնայինքն սուրախացան ընդ
 երկրատրացս նորոգումն,
 Քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ
 Վերնատանն»:

Որով նորոգեցան դասք առաքելոցն,
 Եկեղեցու մանկունքն անգամ ցնծությամբ
 տոնում են Հոգեգալստաւը և զարդարվել են
 լուսափայլ և գեղապայծառ պղծատներով:
 Գ օրվա Հարցը՝ «Որ բոլորից ես պատ-
 ճաւ», նույնպէս դավանաբանական ընտելի
 շարական է:

«Հայր անծին և անսկզբն,
 Որդւոյ պատճառ անժամանակ ծննդեամբ
 Եւ Հոգւոյ բղխման անքննաբար...»:

Այս կանոնները, «Մեծացուցէ»-ներում,
 «Ողորմեա»-ներում, «Տէր յերկնից»-ներում
 նույն հիմնական, տոնի վերաբերյալ միտ-
 քերն են արտահայտվել և գովերգվել: Հատ-
 կապես ջերմ զգացմունքով ու թափով և գե-
 ղեցիկ պատկերներով են գրված Գ օրվա
 «Ողորմեա»-ն Որ ի վերայ բղխեալ գաւա-
 դանին Յեսսեայ և «Տէր յերկնից»-ը՝ «Ընդ
 երկնայնոց»:

Գ օրվա Օրհնութեան՝ «Արեգակն արդա-
 րութեան»-ի մեջ Շնորհալին կատարում է
 գեղեցիկ համեմատություն Քրիստոսի և
 լուսի միջև: Քրիստոսը արդարութեան արե-
 գակ է, որը ծագել է աշխարհի վրա և հա-
 յածել անթափանց խավարը: Մահից հետո
 նա հարություն առավ, բարձրացավ երկինք
 և այնտեղից առաքեց բանական, անճառ
 լույսը՝ «Հոգին ճշմարտութեան», որը «մե-
 ժաձայն հնչմամբ» իջավ բարձունքներից ա-
 ռաքյալների վրա:

ՎԱՐԴԱՎԱՌԻ Բ ԵՎ Գ ՕՐԵՐԻ ԿԱՆՈՆԸ

Վարդավառի տոնը Հայաստանյայց եկե-
 ղեցին կատարում է Հոգեգալստից 7 շաբաթ
 հետո: Հայամավուրքը այս տոնը անշարժ

«Առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց
 Հոգին ճշմարտութեան,
 Մխիթարեւ... և հրազինել զընտանի»:

Դ օրվա հարցն էլ՝ «Որ անքնին ես յեու-
 թան», կրում է դավանաբանական ընտելի և
 նույն վարդապետական մտքերն է արտա-
 հայտում տարբեր բառերով: Ընդհանրապես
 այս շորս օրերի կանոնների մեջ օրհնու-
 թյունը, «Տէր յերկնից»-ն ու «Ողորմեա»-ն
 ավելի աշխույժ և պատկերավոր են քան
 Հարցերը:

Վերջին օրվա «Ջանսկզբնաբար բղխումն
 ի Հօրէ» Օրհնութեան մեջ Ս. Հոգին այս ան-
 գամ համեմատվում է ոչ միայն լուսի, այլ
 նաև ջրի հետ, ժամաստութեան աղբիւրը Ս.
 Հոգին համեմատվում է իհարկե կենդանի
 ջրի հետ, որից լցվեցին աստվածային գե-
 տերը և ցրվելով արեւելքի տիեզերքը, որ-
 պես Եդեմի քառավտակ աղբյուրը:

«Այսօր բղխեաց ջուր կենդանի

յնրուաղէմ,

Յորմէ լցան գետք աստուածայինք,
 Եւ ընթացեալք արբուցին տիեզերաց
 Զքառավտակ աղբիւրն Եդեմայ:

Այս օրվա հարցը՝ «Անեղանելիդ Աս-
 տուած», նույնպէս դավանաբանական ընտել-
 թի մի երգ է, ուր երգվում են «անեղանելի
 Աստուած»-ը, «Մագումն ի Հօրէ անճառ
 ծննդեամբ» Որդին և «անեղ էութիւն» Աս-
 տուծո Հոգին:

Գեղեցիկ են այս օրվա «Ողորմեա»-ն և
 «Տէր յերկնից»-ը:

Առաջինի մեջ երգվում է, որ Տերը ողոր-
 մութեամբ իջավ աշխարհ, փառքով ծլավ
 Հօր մօտ, այսօր էլ լացել է նաև երկնային
 գանձարանի դուները և առատապես բաշ-
 խում է իր գանձը աղքատ մարդկության:

Բանաստեղծը ցնծությամբ է սկսում և
 ցնծությամբ էլ վերջացնում Հոգեգալստյան
 շորս օրերի շարականները: Երգում է նա շա-
 րականների վերջում:

«Այսօր ցնծամք երկրատրքս
 Ընդ դայատեան երկնայնոյն,
 Եւ պարելով ընդ հրեշտակս
 Երգեմք զփառս ի բարձունս»:

Շնորհալու Հոգեգալստյան շարականները
 մեր շարակնոցի գեղեցիկ զարդն են կազմում
 իմաստով, թափով և գեղեցիկ պատկերնե-
 րով:

Կնում է օգոստոսի 6-ին, երբ լատինացիք և
 հույները կատարում են այդ տոնը և կոչում
 Ալլակերպություն: Ալլակերպության տոնը

արևմտյան եկեղեցիներում սկսվել է տոնվել ոչ շուտ քան Ը դարը: Նիկիայի Բ ժողովը, որը տեղի ունեցավ 387 թվականին, խոսում է նաև այս տոնի մասին:

Իսկ մեզ մոտ այս տոնը շատ վաղուց է հաստատված եղել՝ դեռևս քրիստոնեության սկզբնական շրջանում: Ս. Սահակի կանոնական դրվածքների մեջ երկու անգամ հիշատակված է Վարդավառի տոնը: Ըստ էության Վարդավառի տոնը ազգային հեթանոսական տոն է եղել և տոնվել է քավականին հանդիսանում է շքեղ՝ կապված Անահիտի ու այդ տոնից անբաժան աղավինների, ծաղիկների ու քրի հետ: Քրիստոնեությունը Հայաստանում տարածվելուց հետո հավանաբար Ս. Գրիգոր Լուսավորիչը ազգային մեծ և շքեղ այս տոնն էլ փոխարինեց Քրիստոսի Այլակերպության կամ Պայծառակերպության տոնով: Մեր նախնիք մինչև ԺԲ դարը Քրիստոսի Այլակերպությունը միայն կիրակի օրն էին տոնում, իսկ մնացած երկու օրը՝ երկուշաբթին և երեքշաբթին, հատկացված էր սրբերին, ինչպես այդ ցույց է տրվում մի քանի ձեռագիր Տոնացույցներում: Այդ պատճառով էլ Վարդավառի միայն առաջին օրվա օրը ի լերինն այլակերպեալ շարականն է, որը քավականին հին է և վերագրվում է Մովսես Քերթովին: Մնացած երկու օրվա պատկերը, ինչպես հիշատակում է Շարակնոցի առաջաբանը, գրել է Ներսես Շնորհալին: Հավանաբար Վարդավառի 3 օր տոնելն էլ Շնորհալին է մտցրել Հայ եկեղեցում ու գրել այդ երկու օրվա շարականները: Շնորհալու ժամանակից սկսած Հայ եկեղեցին Վարդավառի տոնը միշտ 3 օր է տոնում՝ կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի:

Վարդավառի օրվա «Որ ի լերինն այլակերպեալ շարականը եղել է տակավին է դարում և մեկն էր այն ութ շարականներից, որ երգվեցին Բագավանի եկեղեցում Վարդավառի տոնին Ներսես Շինոզի ժամանակ, երբ այնքան խառն էր շարականների կանոնների դրությունը:

«Որ ի լերինն» Օրհնությունը պարզապես Ավետարանի պատմումների գեղեցիկ և բանաստեղծական մի նկարագրություն է, Մովսես Քերթովի կողմից լավագույնի վերածված: Հետագայում Ներսես Շնորհալին շքեղություն տվեց այս տոնին և պայծառացրեց՝ տալով շարականի պատ և համարելով այն լուսավարների հինգ տոներից մեկը:

Վարդավառի Բ և Գ օրերին ընծայված Շնորհալու շարականների մեջ ավելի նշանավոր են երկու Օրհնություն և երկու Հարց, Բ օրվա Օրհնությունն սկսվում է ճշառագայթ փառացած բառերով, ուր բանաստեղծն երգում է անբովանդակելի աստվածային լույսը, որը

պարագրվելով մարմնում, այսօր երևացել է Թաքոր լեռան վրա՝ աստվածային փառքով պայծառացած:

Նա, որ անտես է Սերովքների համար, հրեղենների համար անմեղքների հուր է, անհասանելի է, բայց այսօր խոնարհվեց հրեղենների մոտ ու նրանց աշխ առաջ պայծառափայլվեց:

«Որ անտես սրովքէից, անհաս ի վեր քան զբան...

Որ հրեղինացն անմեղքների հուր աստուածութեանդ,

ի հոգեղէնս խոնարհեալ լույսդ արփրական...»:

Աստվածային այն լույսը, որ ամպերով երևաց Մովսեսին Ահնա լեռան վրա, այսօր էլ նույն լուսափայլ ամպով երևաց, Թաքոր լեռան վրա և հայտնեց աշխարհին, վկայելով, թե դա է իմ Որդին, դրան լսեցեք:

«Որ ի նախնումն երեւալ Մովսէսի ամպովքն ի Սինա,

Այսօր լուսափայլ ամպովք ի Թաքոր լայտնեալ վկայեաց՝

Դա է իմ Որդի, դա՛ւ լուսաւորեց:

Վարդավառի Բ օրվա Օրհնությունն մեջ արծարծված գլխավոր զաղափարները գրեթե կրկնված են Հարցի մեջ, որն սկսվում է «Այսօր պիտոհուրդ անճառելի աստուածութեանդ» բառերով: Հարցի սկզբում երգվում է, որ Փրկիչը Իր անճառելի աստվածությունն խորհուրդը նախապես ծածկել էր աշակերտներից, իսկ այսօր հայտնեց ու պարզ երևաց Թաքոր սարի վրա:

«Այսօր պիտոհուրդ անճառելի աստուածութեանդ քո, Քրիստոս,

Զծածկեալն ի սկզբանէ յայտնեցեր աշակերտացն ի Թաքոր լերինն...»:

Ուրախ զգացումներով լեցուն, սահուն ու աշխույժ տոգորով են գրված այս օրվա Մեծացուցեալն, Ողորմեանն և Մեղանկունքը: Ինչպես այդ երևում է Շնորհալու կենսագրախոսություններով գրված շատ շարականներում, այստեղ ևս բանաստեղծը լցված է ուրախությամբ: Նա ուզում է, որ իր զգացմունքներին հաղորդակից դարձնի երկիրն ու երկիրը, ամբողջ տիեզերքը, անգամ անշունչ լեռները՝ հատկապես Թաքոր ու Հերմոն սարերը, Երարձրացեալ գերազանց Ահնա՛ս Մուրք ու բարձր են Սինան, Թաքորն ու Հերմոնը՝ «լերինք Աստուծոյ, որոնք կապված են իրենց պատմությամբ Մովսէսի և Հիսուսի անվան հետ:

«Ցնծա այսօր լեռան վերին Սինն, լեռան Թաքոր հանդերձ Հերմոնիս: Բարձրացեալ գերազույն Սինա, Եւ էջք Աստուծոյ դուռն երկնից ի նմա՛ս:

Բայց միայն երկրի վրա գտնվող այս սարերը չեն, որ այսօր ցնծում են։ Ուրախություն ու ցնծություն է տիրում նաև երկնքում՝ «վերին Սիոն»-ում, ցնծում է երկնային հարսնարանը, երբ իր պայծառությամբ երևում է երկնավոր Փնսան՝ վարդավաճ լույսով ու փառքով։

«Յնծայ այսօր լեռան վերին Սիոն,

Հարսնարան անմահ արքային,

Տեսանելով զերկնաւոր փեսային՝

Ջարդարեալ լուսով հայրական փառօքս։

Գ օրվա կանոնի ձևյալսօր որ էն՝ Օրհնություն հիմնական միտքն այն է, որ առաքյալներն այսօր երկնից լսել են Աստուծո հայրական բարրադր Փրկչի մասին, թե՛

«Դեռ է Որդի Իմ սիրելի ընդ որ հաճեցայ»։

Այս օրվա Հարցն է՝ «Այսօր զխորհուրդն անճառ»-ը, որը թեպետ փոքրիկ, բայց գեղեցիկ ու իմաստալից մի շարական է։

«Այսօր բղխեալն մարմնով յարմատոյն

Յնծայ գաւազան

Մաղկեցաւ լուսով ի Թարօր լերինն։

Այսօր անմահութեան հոտ անոյ՞

բուրեաց ի Թարօր,

Թմրեալ ընդարմացոյց զդասս

առաքելոցն»։

Եթե իր գեղեցկությամբ ու պատկերներով աչքի է ընկնում Բ օրվա «Տէր լերկնից» շարականը, ապա Գ օրվա կանոնի մեջ էլ գեղեցիկ է «Մանկունք»-ը։ Այստեղ ևս հորդում են բանաստեղծի խանդավառ զգացումները։ Դարձյալ ցնծություն է Թարօր սարի վրա, բոլոր լեռներն են այսօր ցնծում ու պարում։

ԱՍՏՎԱՄԱՄՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Բ ԵՎ Գ ՕՐԵՐԻ ԿԱՆՈՆԸ

Աստվածածնի Վերափոխման տոնը Արևիկի է Արևմուտքի բոլոր եկեղեցիներն էլ տոնում են։ Հուլիսին այս տոնն անվանում են Մեղաբարսիս կամ Քրիստիս, որ նշանակում է ննջում։ Ասկայն Աստվածածնի փոխման տոնը հայերի մոտ ավելի հին է քան որեւէ այլ տեղ։ Արևմտյան եկեղեցին Զ գարից շուտ չի ունեցել այս տոնը։ Այս տոնը ոմանք դնում են Հուստինիանոսի (527 թ.) և ոմանք էլ Մորիկի (528 թ.) թագավորության տարիներին։ Սահակ Պարթևի կանոնների մեջ այս տոնը հիշվում է երկու անգամ։ Բացի այդ, Մովսես Խորենացու թուղթը, որը գրել է նա Սահակ Արծրունի նախարարին, նույնպես հիշատակում է այդ տոնի մասին։ Երբ այս Սահակ իշխանը հրավիրում է Խորենացուն իր մոտ, նա ասում է, թե չի կարող գալ, «մինչև կատարենք

երկնարեակ Մովսեսն ու Եղիան էլ են երկնից իջել, եկել այս սարը՝ Տիրոջ փառք տեսնելու և պարելու համար։ Բոլոր լեռները պալ են ռոնել։ Այստեղ են իջել ու պար ռոնել բոլոր առաքյալներն ու մարգարեները ե երգում են ու փառաբանում այն լույսը, որ եղել է առաջ քան ինքը՝ արևը։

«Վերինք ամենայն այսօր ցնծան ընդ

Ելանել քո, Տէր, ի Թարօր,

Պորում պարեն և ընդ երկնայնոցն դասք

առաքելոց և մարգարէիցն։

Ընդ որս և մեք օրհնեմք յառաջ քան

զարն զլուսոյս»։

Վարդավառի երկու օրերին վերաբերող Շնորհալու վերևում հիշված շարականներում առանձնապես ուշադրության են արժանի Բ օրվա, օրհնության վերջին հատվածներից հետևյալ գեղեցիկ տողերը՝ իրենց պարզ, կոկիկ ու մատչելի լեզվով։

«Դալոց է Միածինն փողով և փառօք Հօր,

Եւ զհղեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ։

Լուսաւոր են ճանապարհք արդարոց,

Օւ բիւրատր րանակս հրեշտակաց ամպովք

ընթանան։

Ի վերինն Երուսաղէմ թալին ամպովք ընդ

առաջ Տեառն յօգս...»։

Շնորհալու գրած այս շարականները, որոնք վերաբերում են Վարդավառի Բ և Գ օրերին, գրված են թափով, սահուն ու գեղեցիկ լեզվով և համեմատաբար բարձր տաղաչափությամբ։ Տեղ-տեղ, հատկապես Օրհնությունների և Հարցերի մեջ, կան կրկնություններ, որոնք չնայած թերությունն են, բայց չեն նսեմացնում այս կանոններին պատկանող շարականների պայծառ ու գեղեցիկ պատկերը։

տօն Իսկուհւոյն»։ Վերափոխման Ա օրվա կանոնը՝ «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին», վերագրվում է Մովսես Խորենացուն։ Նշանակում է տակավին Ե դարում Հայոց եկեղեցին տոնել է Վերափոխումը։ Այսպիսով Վերափոխման կամ Աստվածածնի տոնը ամենահինն է մեր եկեղեցում։

Ինչպես Հոգեգալստյան, Վարդավառի, այնպես էլ Վերափոխման տոնը միայն մի օր էր տոնվում, հավանորեն մինչև ԺԹ դարը։ Ներսես Շնորհալին սահմանեց Վերափոխման իննօրյա տոն, որից 6-ը՝ պատ, իսկ 3-ը՝ հանդիսավոր տոներ, ինչպես հագորդում են հին տոնացույցները։

Շնորհալու գրած Վերափոխման Բ օրվա «Այսօր զանճառելի ծննդեանս Օրհնությունն ունի Դէ ձայն և բաղկացած է 6 տնից։ Սակայն այս շարականի վերջին տունը՝ «Ի

տեանի հրաշից» սկսվող բառերով, հանված է Օրհնության վերջից և դրված է 4 էջ հետ, այսինքն «Քրիստոս վարդապետի «Արեւիկ» գերարժիւն» հայտնի շարականից հետո, ըստ երևույթին ամբողջ կանոնը Օրհնության մեջ ընդգրկելու համար, որն ընդունված էր երևույթ է մեր շարականներում, որով կանոնների մեջ:

Այս Օրհնության մեջ Ենորհային փառաբանում է Տիրամոր՝ մարմնով երկինք փոխադրվելը:

«Լույսն անքնին ծածկեալ ի ծոց Հոր,
Որ ծագեցաւ ի քէն, Մայր և Կոյս,
Այսօր իջեալ անմարմնական դասուք
Հրեղինացն,

Փոխադրեաց զքեզ լուսափայլ ամպովք
Ի լույսն անստուկը:

Իր արվեստով ուշադրության արժանի է նաև այս կանոնի «Որ զՄիածնի Որդույ ցոռ Հարցի ռոտրոթատուն»-ը: Այստեղ երգի հետինակը պատկերավոր ձևով տալիս է, թե ինչպիսի երկնի լույսին զվարթնոց» բոլոր լուսնայինները Միածնի հետ միասին իջել են երկիր՝ Աստվածամորը երգելով ու փառաբանելով երկինք փոխադրելու համար:

Գ օրվա «Այսօր հրաշափառ կոչմամբ Հոգւոյն» Օրհնության մեջ երգվում է, որ Կույսի մարմինը երկինք փոխադրելու համար եկել էին նաև առաքյալներն ու իմաստուն կույսերը, որոնք նմանապես օրհնում էին «զամենօրհնեալ Սրբուհին»:

Աստվածամայրը փոխադրվում է երկինք՝
«...Մտանելով ի վերինն նրուսաղէմ,
Ի յառադասուն անապական

յանմուանելին...»:

Սրանց հետ և Հիսուսը, «իջեալ փառօք», իր Մոր մարմինը փոխադրեաց յիմանալի և լանպատում գերազոյն ընտրելին»:

Գ օրվա շարականների մեջ բարձր արվեստով են գրված նաև «Մեծացուցէ՛ք-ն և «Տէր յերկնից»-ը, «Մեծացուցէ՛ք-ի մեջ էլ երգվում է, որ Միածինը երկնային և երկ-

րային բոլոր սրբերի հետ միասին, հանդիսավոր կերպով վերափոխել են Ս. Կույսին երկնային խորանը, Յնծայի զգացումներով լեցուն է կանոնի «Տէր յերկնից»-ը: Ուրախ է ինքը՝ երգիչը, Տիրամորն իր զգացումներին հաղորդակից անելու համար երգում է՝ «Ուրախ յեր Մայր անձառ լուսոյ Սուրբ Աստուածածին...»:

Քանզի որ ի քէն ծնաւ Որդին Միածին՝

վայր իջեալ յերկնից

Այսօր վերածեաց զքեզ սքանչելի փառօքս
և վերչապես՝

«Ուրախ լեր, հարսն երկնային, կոյս

անապական,

Քանզի երկնայնոցն զքեզ այսօր ընկալեալ
սունէին ուրախութեամբ:

Ընդ որս և մեք երգեսցուք քեզ

օրհնութիւն, Մայր Տեառն»:

Աստվածածնի վերափոխման Ենորհային ընծայել է նաև երկու գեղեցիկ տաղ, որոնք իրենց բովանդակությամբ շատ նման են այս երկու օրվա կանոնների շարականներին, բայց ձևով ավելի բարձր՝

Բանասիրական տեսանկյունից շատ հետաքրքրական է, որ Ենորհային, ինչ տոների կամ սրբերի կամ կանոնի շարականները է գրել, նույն տոներին ու սրբերին էլ նվիրել է ձերկուական տաղ, մեծ մասամբ մեկը ալբոթների կարգով գրված, իսկ մյուսը՝ հորդորակ, ներսես անվանակապով: Ասենք օրինակներով: Ենորհային Մաղկաղարդի մասին ունի և՛ շարական և՛ ձերկու տաղ: Նույնը նաև Ավագ տուրաթի, Վարդապետի, Վերափոխման, Հրեղիստապետաց, Առաքելոց, Մարգարեից, Հայրապետաց, Հովհաննես Մկրտչի, Որդվոցն Որոտման, Քառասուն մանկանց, Տրդատ Թագավորի մասին: Զարմանալի նմանություն կա այս շարականների և տառերի բովանդակության միջև, տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնություն:



ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԵՐԱՆԸ ՀԱՅՏՏՐԵՐՈՒՄ Է ՈՒՍԵՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1958—1959 ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ ՏՐԵՆԺՐՋԱՆԻ ՀԱՄԵՐ

Մայր Արող Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօրիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ յարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ծրիարար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրեական պիտույքներ և այլն:

Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, գերծ են ֆիզիկական րեություններից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները բնություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող րեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Նրեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների րեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց րեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն րվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին րեմերի րեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՏ, էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԻՊԻՍԿՈՊՈՍ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)